**ПРОБЛЕМА УПРАВЛЕНИЯ ВНИМАНИЕМ В СИСТЕМАХ
ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В СПОРТЕ
ВЫСШИХ ДОСТИЖЕНИЙ**

СОПОВ В.Ф

**РОССИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ, СПОРТА,
МОЛОДЁЖИ И ТУРИЗМА, МОСКВА, РОССИЯ**

Аннотация: Статья посвящена анализу результатов применения экспресс-системы психологической подготовки спортсмена высокой квалификации, ориентированной на решение проблемы управления вниманием. Подчеркивается важность выделения основного объекта концентрации внимания в актуальном движении в процессе психотренинга, а затем в ходе соревнования. А так же важность формирования позитивной установки-инструкции для устранения влияния механизма гиперкомпенсации в ситуациях требующих не совершать каких либо конкретных действий.

Ключевые слова: *экспресс-программа психологической подготовки, управление вниманием, гиперкомпенсация.*

**EXPERIENCING DIFFICULTIES WITH ATTENTION
CONTROL IN THE SYSTEMS OF PSYCHOLOGICAL
PREPARATION IN SPORT OF HIGHER ACHIEVEMENTS
SOPOV VLADIMIR F.**

**RUSSIAN STATE UNIVERSITY OF PHYSICAL
EDUCATION, SPORT, YOUTH AND TOURISM,
MOSCOW, RUSSIA**

Abstract. This article dedicated to analysis of the results of adaptation of express-system of the psychological preparation of higher achievements sportsman, oriented for the decision of difficulties with attention control.

Emphasis importance of the detachment of the main object attention control in the actually movement of psycho-training process? And then during competition.

It is also said the importance of the positive setting-instruction for the elimination the influence hyper-compensation mechanism in the situations that do not requiring any specifics actions.

Keywords: *express-program of the psychological preparation, attention-control, hyper-compensation.*

Актуальность. Предсоревновательная подготовка – это моделирование соревновательных ситуаций с помощью психофизиологических техник, формирование установок на предстоящую деятельность, как на осознаваемом уровне, так и на неосознаваемом уровне, ауто- и гетерорегуляция психических состояний спортсмена и команды.

Причиной спортивной неуспешности часто называются проблемы связанные с вниманием. В когнитивной психологии уделяется большое внимание объяснению т.н. устойчивых повторяющихся ошибок в ситуациях напряженной соревновательной борьбы разными психологическими феноменами взаимодействия внимания и сознания [2, с.20-21].

При этом отмечено значимое влияние феномена дачи установки не совершать какое-то конкретное действие, при котором ошибки совершаются именно в тот момент, когда о них пытаются не думать и именно в том направлении о котором запрещено думать [5, с.265-280], что позволяет говорить о наличии механизма гиперкомпенсации – выполнении именно запрещенной инструкции.

При этом остается открытым вопрос-это ошибка сознания по невниманию или особенности концентрации внимания в таких ситуациях? [2, с.20-21]. Исследования в психологии в особых условиях труда показали, что если *в обычных условиях человек способен удерживать в сознании четыре-пять логических события, то в экстремальных ситуациях, требующих быстроты и однозначности решения – только одно.* Для опознания сложного объекта необходимо выделение одного-двух значимых элементов, при большем количестве объект не опознается [1, с.150-167]. Эти исследования объясняют наличие одной из основных проблем в соревновательном состоянии спортсмена – потерей контроля над более чем 3-4 объектах .

Но как следует из вышесказанного успешно можно действовать контролируя один элемент. Несколько хуже -два. Три уже контролировать очень сложно. Поскольку всегда важнее какой-то один элемент спортивного движения ,то получается, что активное внимание должно быть направлено на этот главный элемент(например в стрельбе это «удержание» и «нажим на спуск», а прицеливание – остается под пассивным контролем).

А если учесть большую динамику действий в практической стрельбе, становится очевидной необходимостью, с одной стороны навыка саморегуляции состояния и осознанного контроля за важным действием, а с другой- навыка пассивного параллельного контроля за остальными элементами упражнения.

Это так же важно, например в гребле на байдарках и каноэ, где необходимы и контроль за качеством (скорость, мощность, точность) гребка и за сохранением равновесия лодки. И все это на фоне нарастающего утомления.

Нами разработана и неоднократно реализована экспресс-программа предсоревновательной подготовки элитных спортсменов.

В группе высококвалифицированных спортсменов команды «Гепард» по практической стрельбе в сборной команде по гребле на байдарках и каноэ Республики Казахстан, при предсоревновательной подготовке к Олимпийским играм в Рио-де-Жанейро, посредством экспресс-системы психологической подготовки спортсмена [3] направленной на обучение психической саморегуляции (ПСР) и идеомоторной тренировки (ИМТ) *для управления вниманием в условиях дефицита времени*, была поставлена цель -сформировать алгоритм для достижения интегральной готовности к максимальному спортивному результату в максимально короткие сроки. Время подготовки равнялись 21 дню в обоих случаях.

Методика исследования. После углубленного психологического обследования системой тестов «Аргонавт» [3,с.8-15] и консультирования, спортсменам было предложено пройти программу психологической подготовки. Контроль состояния осу-

щественная шкалой тревоги-мотивации В.Сопова [4, с. 79-92], цветовым тестом Люшера и измерением биопотенциала тела.

Программа тренинга включала:

-обучение психической саморегуляции состояния:

- а) с целью восстановления после тренировки;
- б) с целью мобилизации перед тренировкой.

-идеомоторная тренировка технических элементов стрельков: триады – прицеливание, нажим на спуск, удержание; у гребцов – сохранение структуры и мощности гребка при нарастающем утомлении.

-тренировка внимания:

- а) с целью тренировки центрального зрения;
- б) с целью тренировки периферического зрения;
- в) с целью переключения внимания.

-техника вхождения в оптимальное боевое состояние (ОБС) перед стартом и техника управления ОБС в ходесоревновательной борьбе.

-позитивное перепрограммирование всех установок спортсменов на выполнение соревновательных действий.

-формирование и актуализация мотивов достижения максимального спортивного результата, итоговый дебрифинг фиксации интегральной готовности.

Результаты исследования. Предварительная психодиагностика показала, что гребцы обладали более высокой мотивацией как общей, так и к достижению и в борьбе. У них была более выражены эмоциональная устойчивость и волевая активность, низкий уровень напряженности и тревоги. Состояние психологической готовности характеризовалось оптимумом актуальной мотивации и тревоги. Лишь были зафиксированы меньшие значения объема внимания и концентрации внимания.

В ходе реализации программы психологической подготовки гребцов осуществлялся контроль за динамикой психического состояния. Динамика показателей ЭКС после тренировочной нагрузки регулярно находилась в зоне оптимума начиная с 3-го занятия ПСР.

После сеанса ПСР, демонстрируя в нем максимальное расслабление, гребцы и стрелки показывали необходимый уровень мобилизации, не превышающий пороговый уровень. Динамика коэффициента вегетатики, измеряемая тестом Люшера, подтверждала эту закономерность и позволила выявить нарастание напряженности у двух стрелков и установить причину, заключающуюся в опасениях не справиться с порядком контроля за «удержанием» и «прицеливанием».

Гребцы в процессе идеомоторного тренинга существенно корректировали технику гребли и меняли вербальные обозначения элементов с запрещающих на позитивные.

Обе группы спортсменов полностью выполнили алгоритм экспресс-программы, освоив: релаксацию – контроль внимания – идеальный образ техники исполнения – вход в ОБС – самооценка состояния готовности – реализация в соревнованиях.

В конце периода соревнований, длившегося с сентября по декабрь 2016 года, был подведен итог эффективности группы стрелков. Он показал значительное превосходство стрелков группы-А над стрелками контрольной группы группы-В. При этом юный спортсмен группы-А (кмс) показал результаты превышающие средние по группе-В, как по занятым в соревнованиях местам, так и по эффективности стрельбы. Спортсмен В. группы-А занял первые места во всех шести соревнованиях. Вся группа демонстрировала высокую стабильность результатов (разброс мест в соревнованиях был не более 2-х).

Сборная команда гребцов так же эффективно освоила экспресс-программу и очень успешно выступила на олимпийских играх – все 9 гребцов пробились в финалы Олимпиады в своих видах гребли, активно боролись за призовые места.

Выводы. Контроль за динамикой состояния и результатами соревновательной деятельности показал высокую эффективность сочетанного применения в предсоревновательной психологической подготовке стрелкови гребцов психической саморегуляции, целенаправленной тренировки свойств внимания, идеомоторной тренировки с акцентом на ведущих элементах техники, сознательного вхождения в оптимальное боевое состояние,

управление им в ходе соревнования за достаточно короткий период времени (2 недели). А так же зафиксировано длительное сохранение приобретенных навыков.

 **СПИСОК ЛИТЕРАТУРА.**

1. Ганзен В.А. Системные описания в психологии. Л., 1984.-240с
2. Сафонов В.К., Сопов В.Ф., Мирошников С.А. Ошибки внимания или особенности концентрации внимания. «Спортивный психолог», 2015-№ 3. С.20-24.
3. Сопов В.Ф., Теория и методика психологической подготовки в современном спорте./В.Ф.Сопов.- М., 2010.-115с.
4. Сопов В.Ф. Психические состояния в напряженной профессиональной деятельности. М., Академический проект.,2005.- 120с.
5. Bakker F.C., Oudejans R.R.D., Binsch O., Kamp J. van der. Penalty shooting and gaze behavior: Unwanted effects of the wish not to miss // International Journal of Sport Psychology, 37, 2006, 265-280 p.

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՎԱԳԻՄՅԱՆ Ռ.Ա., ԲԱԲԱՅԱՆ Մ.

ՎԱՆԱՋՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,

Ք. ՎԱՆԱՋՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում է մոտիվացիա հասկացությունը: Հոդվածում կարևորվել է մոտիվացիայի դերը սպորտային հաջողության մեջ: Առանձնացվել են այն գործոնները, որոնք նպաստում են մոտիվացիայի մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև իջեցմանը: Այսպիսով, մարդու կողմից իրականացվող ցանկացած գործունեության, այդ թվում և սպորտային, հաջող իրականացման գրավականը բարձր մոտիվացիայի մակարդակն է:

***Առանցքային բառեր.** մարզիկ, սպորտային գործունեություն, մոտիվացիա, մոտիվացիայի ձևերը, մոտիվացիայի իջեցման փուլերը, սպորտային հաջողություն, հաղթանակ:*

РОЛЬ МОТИВАЦИИ В СПОРТИВНОМ УСПЕХЕ

АВАГИМЯН Р., БАБАЯН М.

ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ВАНАДЗОР,

Г. ВАНАДЗОР, АРМЕНИЯ

Аннотация. В статье рассматривается термин мотивация. Важное место в статье занимает роль мотивации для успеха, в том числе и победы. Отмечены те факторы, которые способствуют повышению или снижению уровня мотивации. И так, мы пришли к выводу, что любое действие, которое совершается успешно, зависит, в первую очередь, от уровня мотивации.

***Ключевые слова:** спортсмен, спортивная деятельность, мотивация, виды мотивации, этапы снижения мотивации, удача, победа.*

THE ROLE OF MOTIVATION IN SPORTS SUCCESS
AVAGIMYAN R. BABAYAN M.
STATE UNIVERSITY OF VANADZOR VANADZOR, ARMENIA

Abstract. This article discusses the concept of motivation. In the following article the importance of motivation in sport success is emphasized. Different factors are segregated which foster the enhancement of motivation level, as well as affect the reduction of the level. Thus, the high level of motivation in any of the human activities, including sport, is the guarantee of success.

Key words: *a sportsman, sport activity, motivation, kinds of motivation, motivation reduction phases, sport success, victory.*

Արդիականություն: Սպորտում մոտիվացիայի հիմնախնդրի ուսումնասիրմամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ: Սպորտով զբաղվելու պահանջունքը, բարձրագույն նվաճումներ ունենալու ցանկությունը, անընդմեջ, հոգնեցնող ծանրաբեռնվածությունը պայմանավորված են մարզիկի մոտիվացիոն համակարգով: Ըստ Մ.Վ. Մելնիկովի, մարզիկի համար մոտիվացիան - դա սպորտային հմտությունների կոնկրետ տիրապետումն է, դրանց ցուցադրման հնարավորությունը: Բնականաբար, մարզիկների առջև միշտ եղել է մոտիվացիայի մակարդակի պահպանման կամ բարձրացման խնդիրը: Մրցույթների ժամանակ մարզիկները դրսևորվում են ամենատարբեր ձևերով և ցուցաբերում են ակտիվության տարբեր ձևեր, որը կախված է նրանց մոտիվացիայի մակարդակից:

Մոտիվացիան ոչ միայն բնորոշում է մարզիկի վարքը, այլև պայմանավորում է սպորտային գործունեության վերջնարդյունքը: [2, էջ 86]

Բարձր նվաճումների սպորտը իր էությամբ բնութագրվում է սթրեսոգեն առանձնահատկություններով, որոնք ազդում են մարզիկի հոգեկանի վրա և նորանոր պահանջներ առաջադրում նրա անձին:

Խոշոր մրցումները, որպես կանոն, ընթանում են ըստ ուժի ու պատրաստականության մակարդակի հավասար մրցակիցների անզիջում պայքարում:

Ժամանակակից սպորտային պայքարի լարվածությունը այնքան մեծ է, որ հաղթողին մրցանակային տեղեր չգրավված մարզիկներից բաժանում է միայն միլիվայրկյանի հարյուրերորդական մասը, մի քանի սանտիմետրը, միավորի հազարերորդական մասը, գրամները, մարզիկի սեփական քաշը և այլն: Սպորտը մկանային պայքարից, ինչպիսին էր 15-20 տարի առաջ, վերածվել է խելքի ու նյարդերի պայքարի, իսկ դա հանգեցնում է հոգեկան սթրեսի դրսևորմանը: Այսօր խոշոր մրցումներում, հաղթում է ոչ թե նա, ով գերազանցում է մրցակիցներին միայն ֆիզիկական կամ տեխնիկատակտիկական բարձր պատրաստականությամբ, այլ նա, ով կարողանում է «հաշտվել սեփական հույզերի հետ», զսպել նյարդային լարվածությունը և մինչև բուն մրցումային պահը պահպանել նյարդահոգեկան թարմությունը: Մարզական արդյունքների բուռն աճը մեծ պահանջներ է ներկայացնում ոչ միայն մարզիկի ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական պատրաստականությանը, այլևս նրա հոգեկանին: [1, էջ 7]

Բարձր մոտիվացիա ունեցող մարզիկը ավելի արդյունավետ ձևով կարող է իրականացնել իր պոտենցիալը, ընդ որում, նա կարող է առավելագույն կերպով դրսևորել իր ֆիզիկական և հոգեբանական ուժերը, եթե դա պահանջում է իր առջև դրված նպատակը: Սպորտային գործունեության մեջ բարձր պահանջներ են ներկայացվում մարզիկի հուզականային ոլորտին: Հաղթանակի նկատմամբ տրամադրվածությունը, ընդհանուր անձնային և կամային ոլորտներում պատրաստվածությունը բնորոշում են սպորտային գործունեության արդյունավետությունը: Մրցման ընթացքում սպորտային գործունեության հաջողության վրա մեծ ազդեցություն կա-

րող են թողնել մարզիկի խառնվածքը, բնավորությունը, մարզիկի մոտ առկա մոտիվացիայի առանձնահատկությունները, մարզիկի ուղղվածությունը, նրա հնարավորությունները, նրա պոտենցիալը: [7]

Հետազոտության նպատակը: Սպորտային մոտիվացիան դիտարկել ոչպես մրցակցային բարձր արդյունքների ցուցադրման և արդյունավետ մարզման առաջատար գործոն:

Հետազոտության խնդիրները: 1. Բացահայտել սպորտային մոտիվացիայի հիմնական բաղադրիչները, 2. Մարզիկի մոտիվացիայի և դեմոտիվացիայի դրսևորումների յուրահատկությունները սպորտային գործունեության մեջ:

Կարող է տարօրինակ թվալ, բայց սպորտում բացի մարզումների գործընթացից, ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցնում մոտիվացիան: Սպորտում ունեցած հաջողությունների մեծամասնությունը վերագրվում է ոչ թե վարպետության կամ տաղանդի առկայությանը, այլ կամքին և բնավորությանը: Շատ հայտնի մարզիկներ հաջողության են հասել բացառապես համառության և կամքի շնորհիվ: Որպեսզի մարզիկը սպորտում գտնի իր մոտիվացիան, նա պետք է ծանոթանա մոտիվացնող գործոններին, որոնցից են, օրինակ.

✓ Հաջողության հասնելը, որը հաճույքի և բավականության մեծ զգացողություն է առաջացնում մարզիկի մոտ: Հաղթանակը ստիպում է մարզիկին երջանկություն զգալ իր աշխատանքից, դառնալ ավելի վստահ իր ուժերի հանդեպ:

✓ Այլ մարդկանց կողմից ճանաչված, հարգված լինելը, մարզիկի մոտ առաջացնում է ինքնահարգանքի լիարժեք ձևավորում: Մարզումների գործընթացը ինքնին նպաստում է մարզիկի անձի ձևավորմանը:

✓ Աշխատիր ինքդ քո վրա: Հաջողության տանող ճանապարհը հեշտ չէ, սակայն, ինչպես հայտնի է, որքան այն դժվար է, այնքան ավելի քաղցր է հաղթանակի համր: Նպա-

տակին հասնելու գրավականն է ինքդ քո վրա սիստեմատիկ աշխատելը, կարգապահությունը և համառությունը:

Սպորտում առանց կայուն մոտիվացիայի անհնար է կամ շատ դժվար է ինչ-որ բանի հասնել: Միայն երկաթյա կամքի ուժի շնորհիվ հնարավոր է մոտենալ և հասնել նպատակին, որն էլ ապացուցում է, որ մարդը շատ բաների է ընդունակ հասնել: Առույզ լինելու զգացումը, էներգիայի առկայությունը, պոտենցիալը - մոտիվացիայի հիմնական բանալիներն են: Որպես մոտիվացիայի աղբյուր կարող է հանդիսանալ տարբեր մարզիկների մասին կարճամետրաժ տեսաֆիլմերը:

Ի՞նչն է հանդիսանում այն շարժիչ ուժը, որն ընկած է մարզական դրդապատճառի հիմքում: Չիմանալով մարզիկի պահանջմունքային մոտիվացիոն ոլորտը, առանձնահատկությունները, դժվար է բացահայտել մարզիկի մոտիվացիայի մակարդակը: Մոտիվացիան անձի հոգեբանական կառուցվածքի հիմնական մասն է կազմում, որը ձևավորվում է ամբողջ կյանքի ընթացքում: Սպորտում մոտիվացիան կախված է ինչպես ներքին գործոններից՝ խառնվածք, բնավորություն, այնպես էլ արտաքին գործոններից՝ ծնողների, ուսուցիչների, մարզիչների, միկրոմիջավայրի ազդեցությունից: Առաջավոր մասնագետների կարծիքով մարզիկի անձի կառուցվածքի հիմքում ընկած է նրա մոտիվացիոն ոլորտը:

Արցակցային պայքարում մրցակցի մասին տեղեկատվությունը մեծ նշանակություն կարող է ունենալ մարզիկի համար: Այս հանգամանքը մեծ հաջողությամբ կարող են օգտագործել մարզիչները: Շատ կարևոր է ոչ միայն ընդհանուր տեղեկատվության տրամադրումը մրցակցի մասին, այլ նաև նրա թերությունների բացահայտումը, օգտագործելով մրցակցի թույլ կողմը և փորձել հաղթահարել նրա ուժեղ կողմը: Վերը նշվածը ոչ միայն ընդլայնում է մարզիկի հնարավորու-

թյունների սահմանները, այլև բարձրացնում է մոտիվացիայի մակարդակը: [5]

Սպորտում հաջողության հասնելու մոտիվացիան բնութագրվում է հետևյալ ձևերով. երկարաժամկետ, կարճաժամկետ, իրադրային

Սպորտում հաջողության հասնելու մոտիվացիան կախված է նաև այն միջավայրից, որտեղ մարզիկը ծավալում է իր գործունեությունը: Մարզիչը պետք է հաշվի առնի մարզիկի գերիշխող մոտիվացիոն ուղղվածությունը: Առանձնացվում են այսպիսի ուղղվածության հետևյալ խմբերը.

✓ առաջին ուղղվածությունը հաղորդակցումն է, երբ մարզիկի համար առավել կակրոր և առաջնային է դառնում հուզական-հոգեբանական մթնոլորտը: Եթե մարզիկի պահանջմունքը չի բավարարվում, ապա նրա մոտ կարող է առաջանալ «իրավիճակային տագնապ», այսինքն նա չի կարողանա ճիշտ կողմնորոշվել, սակայն մարզիչի խոսքը մարզիկի մոտ առաջ է բերում կոնկրետ կողմնորոշվածություն:

✓ երկրորդ խմբի մոտիվացիոն ուղղվածությունն է գործունեությունը, այս դեպքում մարզիկի համար առաջնայինը իր պոտենցիալի հնարավոր իրագործումն է:

✓ եթե մարզիկի մոտիվացիոն ուղղվածությունն ուղղված է դեպի իր անձը, ապա այս դեպքում մարզիկի համար շատ կարևոր է մասնագիտական-պրոֆեսիոնալ աճը: Այս տիպի մարզիկները համոզված են, որ իրենց ուժերի իրագործումը պետք է փոխհատուցվի սոցիալական ստատուսի բարձրացմամբ: Այս տիպի մարզիկներն ջգտում են առաջինը լինել: Ավելացնենք, որ մոտիվացիան սերտ կապերով կապված է մարզիկի հոգեֆիզիոլոգիական վիճակի հետ:

Սպորտային գործունեության մեջ, հատկապես մարզական բարձրագույն նվաճումների հոգեբանության մեջ մոտիվացիան (դրդապատճառը) կարևոր տեղ է գրավում: Մակայն

առկա է ակնհայտ խնդիր. նպատակին հասնելու ճանապարհին մարզիկի մոտ մոտիվացիայի իջեցումը կամ կորուստը, որն այլ կերպ անվանում են մարզական գործունեության դեմոտիվացիայի խնդիր: Վերջինս կարող է լուրջ դրդապատճառ հանդիսանալ սպորտից հեռանալու: Այն փաստը, որ բարձր մակարդակ ունեցող մարզիկների մեծ մասը սպորտային հմտության կայացման տարբեր փուլերում թողնում է սպորտը, թույլ է տալիս հաստատել, որ գործունեության մոտիվացիայի վրա բացասաբար ազդող գործոններ, այնուամենայնիվ, գոյություն ունեն: Դեմոտիվացիայի առկայությունը վկայում է մոտիվացիայի իջեցման կամ կորստի մասին: Մոտիվացիայի մակարդակի փոփոխությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր պատճառներով է կատարվում:


✓ նպատակին հասնելուց հետո բավարարվածության զգացում, որին հետևում է հուսահատվածությունը (ֆրուստրացիա), որի պատճառներից են սթրեսը, առողջական վիճակի կտրուկ վատթարացումը, ծանր վնասվածքները:

✓ նպատակին հասնելու ժամանակ դեմոտիվացիոն գործոնների ի հայտ գալը:

Եզրակացություն: Մարզական գրականության վերլուծությունը հանգեցրին հետևյալ եզրակացությունների՝

1. Մարզիկի մոտիվացիան ձևավորվում է մարզական ողջ գործունեության ընթացքում: Այն պայմանավորված է մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններով:

2. Դեմոտիվացիան գրեթե մոտիվացիային հակառակ երևույթների մի գամմա է, որը նույնպես ունի հակառակ սոցիալ-հոգեբանական հիմքեր և զգում է մարզիկի սպորտային հաջողության հնարավորությունները:

 **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Բաբայան Հ. Ա. Հոգեբանական պատրաստության հիմնա-
խնդիրները բարձր նվաճումների սպորտում: Ուսումնական ձեռ-
նարկ: Երևան 2007թ, 123 էջ
2. Трескин А.В., Мельникова Н.Ю. История физической куль-
туры и спорта, учебник, Издательство: Советский спорт, 2013 г.
3. www.self-master-lab.ru, www.armeniasputnik.am,
www.alfacentrsport.am, www.pobeda_sport.am, www.xreferat.com,
www.footsport.am, www.moniteur.ru, www.aravot.am.

**ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄՊՈՐՏԻ
 ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
 ԲԱՂԱԴՐԱՄԱՍ**

ԱՐԶԱՔԱՆՅԱՆ Ս. Ս.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Հոդվածում ներկայացված ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների շրջանում անցկացված հետազոտության արդյունքում հնարավոր եղավ բացահայտել, որ միայն գիտելիքների բարձր մակարդակը չի կարող ապահովել մանկավարժական գործունեության արդյունավետությունը:

Մանկավարժական գործունեության արդյունավետության ապահովման գործընթացում առավել անհրաժեշտ են կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների զարգացվածության բարձր մակարդակ:

***Առանցքային բառեր:** Մանկավարժական ընդունակություն, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, մարզիչ, հաղորդակցական ընդունակություններ, մանկավարժական գործունեության արդյունավետություն:*

**СПОСОБНОСТИ КАК ПСИХОЛОГИЧЕСКИЙ КОМПОНЕНТ
 ДЕЯТЕЛЬНОСТИ СПОРТИВНОГО ПЕДАГОГА
 АРЗАКАНЯН С. С.
 ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
 И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В результате проведенного исследования среди преподавателей и тренеров, стало возможным выяснить, что только высокий уровень знаний не может обеспечить эффективность их профессиональной деятельности.

Здесь бесспорно необходим высокий уровень развития педагогических способностей, а именно организационных и коммуникативных.

Ключевые слова. Педагогическая способность, учитель физического воспитания, тренер, коммуникативные способности, эффективность, деятельность.

ABILITY AS A PSYCHOLOGICAL COMPONENT OF THE SPORTS TEACHER'S ACTIVITY

ARZAKANYAN S. S.

ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT, YEREVAN, ARMENIA

Abstract. As a result of the study among teachers and trainers, it became possible to find out that only a high level of knowledge can not ensure the effectiveness of their professional activities. Undoubtedly, a high level of development of pedagogical abilities is required, namely organizational and communicative.

Key words: Pedagogical ability, teacher of physical education, coach, communication skills, efficiency, activity.

Արդիականություն: Մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտ որոշակի պահանջներ է ներկայացնում այդ գործունեությունն իրականացնողի անձին: Այդ պահանջները՝ կոմպետենցիաները բազմազան են և ընդգրկվում են այսպես կոչված պրոֆեսիոգրամայում: Դրանք ընդգրկում են մասնագիտական գիտելիքների իմացություն, մարդասիրական ուղղվածություն, ընդունակություն, կարողություններ և հմտություններ:

Պահանջների շարքում իր ուրույն դերն ու նշանակությունն ունի ընդունակությունը, որպես գործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային գործոն: Ըստ հայտնի հոգեբանների ընդունակությունը դրսևորվում է, որպես մարդու անհատական-հոգեբանական առանձնահատկություն, որը հանդես է գալիս գործունեության մեջ և հանդիսանում է նրա կատարման հաջող նախապայման: Այս հիմ-

նահարցով զբաղվել են բազմաթիվ գիտնականներ, այդ թվում նաև մանկավարժներ, որոնց աշխատությունները նվիրված են մանկավարժական ընդունակությունների բացահայտման հիմնախնդիրներին: Ըստ նրանց մանկավարժական ընդունակությունները դրանք ուսուցչի անձի անհատական- հոգեբանական առանձնահատկությունների ամբողջությունն է, որն էլ հանդիսանում է մանկավարժական գործունեության արդյունավետության կարևոր նախապայման:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների մանկավարժական ընդունակությունների զարգացվածության արդի մակարդակը:

Մեթոդները: Հետազոտություններն իրականացվել են սոցիոլոգիական հարցման, դիտումների, հարցազրույցի, թեստերի և մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Հետազոտական գործընթացում ընդգրկվել են տարբեր մանկավարժական ստաժ ունեցող 60 ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ և 65 մարզիչներ, որոնց միջին մանկավարժական ստաժը կազմել է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ՝ 13 և մարզիչներ՝ 15 տարի:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների շրջանում անցկացված հարցման միջոցով հնարավոր եղավ պարզաբանել մանկավարժական ընդունակությունների վերաբերյալ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների կարծիքները, անհրաժեշտությունը, քանակը և դրանք կատարելագործելու ուղիները: Այդ նպատակով 2015-2016թթ. Հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների հետ անկետավորման արդյունքում պարզվեց, որ սպորտի մանկավարժների մանկավարժական ընդուն-

նակությունների զարգացվածության ներկայիս մակարդակը չի կարող ապահովել մանկավարժական գործունեության անհրաժեշտ արդյունավետությունը:

Մեր կողմից առաջարկված հարցաթերթի այն հարցին «Համարում ե՞ք արդյո՞ք որ միայն գիտելիքների անհրաժեշտ մակարդակը բավարար է Ձեր գործունեության արդյունավետության ապահովման համար», հետազոտված ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 58%-ը և մարզիչների 68%-ը նշել են բացասական պատասխան:

Հատկանշական է որ միայն մասնագիտական գիտելիքների նույնիսկ բարձր մակարդակը չի կարող ապահովել մանկավարժական գործունեության արդյունավետությունը, մինչդեռ գիտելիքների բարձր մակարդակի հետ մեկտեղ մանկավարժական գործունեության արդյունավետության համար անհրաժեշտ են մի շարք բաղադրիչներ:

Սպորտի մանկավարժներին առաջարկված հարցերից մեկը վերաբերում է այն մանկավարժական ընդունակություններին, որոնք ապահովում են մանկավարժական գործունեության արդյունավետությունը: Հարցման արդյունքում բացահայտվեց, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 90%-ը և մարզիչների 98%-ը գտնում են, որ մանկավարժական գործունեությունում արդյունավետության հասնելու համար առավել կարևորը կազմակերպչական ընդունակությունն է, քանզի դա կարողություն է կազմակերպել ինչպես սեփական գործունեությունը, այնպես էլ այլ մարդկանց, աշակերտների գործունեությունը:

Հաջորդ կարևոր ընդունակությունն ըստ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հաղորդակցականն է (92%), մինչդեռ մարզիչների 96 %- կարծիքով մանկավարժական գործունեության մեջ հաղորդակցական ընդունակությունը գտնվում է երկրորդական տեղում:

Ինչպես նաև հարցման ընթացքում բացահայտվեցին նաև այն ընդունակությունները, որոնք ըստ հետազոտվածների կարծիքի մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման գործընթացում էական դեր չեն խաղում, դրանց թվին են դասվում կոնֆլիկտից խուսափելու, լսելու ընդունակությունները, սթրեսկայնությունը, ուշադրության բաշխումը և այլն:

Մինչդեռ ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի գործունեության մեջ կարելի է կարևորել և դասել որպես առաջնային ու հատուկ ընդունակություն ուշադրության բաշխումը, որն ըստ մեր ուսումնասիրությունների դասվում է հատուկ ընդունակությունների շարքին: Քանզի նրա էությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն մյուս առարկաների մանկավարժների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի գործունեության բարդություններից մեկը կայանում է նրանում, որ նա պետք է մարզահրապարակում և մարզադահլիճում իր ուշադրությունը միաժամանակ բաշխի բոլորի վրա հավասարաչափ: Մինչդեռ դա սպորտում և ֆիզիկական դաստիարակության գործընթացում համարվում է բարդ գործընթաց:

Իսկ այն հարցի վերաբերյալ թե հետազոտվողների կարծիքով որոնք են առավել 6 կարևոր ընդունակությունները ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի գործունեությունում, որի պատասխանները մենք համարում ենք սուբյեկտիվ, կարելի է նշել որ երկու մասնագետների կարծիքով, որպես մանկավարժական գործունեությունն ապահովող և առաջնային ընդունակություն համարվում են կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունները: Ինչը փաստում է նաև մեր կողմից ուսումնասիրված բազմաթիվ գրական աղբյուրներում /Վ. Կրուտեցկի, Կ.Կ. Պլատոնով, Տ. Ի. Արտեմևա, Վ.Վ. Բելառուսովա, Ա.Ի. Միխեև, Ա.Ա. Տեր-Չովհաննիսյան,

Ի.Ա. Տեր-Հովհաննիսյան, Ի.Ա. Չազյուն, Յու. Ա. Ամիրջանյան,
 Ա. Ս. Սահակյան և ուրիշներ:/

Հաջորդ առավել կարևոր հարցին, թե ինչպես կարելի է գնահատել ընդունակությունների զարգացվածության մակարդակը /կարող եք նշել մի քանի տարբերակ/, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 58%-ի կարծիքով գրույցի միջոցով, իսկ մարզիչների 52%-ը՝ դիտումների միջոցով:

Այն հարցին, թե ինչպես կարելի է բարձրացնել մանկավարժական ընդունակությունների մակարդակը, հետազոտվածների մեծամասնությունը նշել են մի քանի տարբերակ, որոնց շարքին են դասվում հետևյալ պատասխանների տարբերակները՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 62-ական %-ը նշել են բարձրացնել վարձատրությունը և զբաղվել ինքնակրթությամբ, մինչդեռ մարզիչների կարծիքով բացի վարձատրության բարձրացումից /64%/, մարզչի գործունեության արդյունավետության համար առավել կարևոր գործոն է հանդիսանում վերապատրաստման դասընթացների կազմակերպումը /68%/: Ինչպես նաև հետազոտված մարզիչների մոտ 36 %-ը նշել են նաև իրենց տեսակետը, որ բացի վերը նշված գործոններից առավել կարևոր է մասնագիտական փորձն ու պրակտիկան:

Եզրակացություն: Ամփոփելով ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների շրջանում անցկացված հարցման տվյալները կարելի է եզրակացնել, որ ըստ հետազոտվածների միայն գիտելիքների բարձր մակարդակը չի կարող ապահովել իրենց մասնագիտական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև այդ գործընթացում անհրաժեշտ են մանկավարժական ընդունակությունների զարգացվածության բարձր մակարդակ հատկապես՝ կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունները, որոնք իրենց հերթին կարելի է զարգացնել հոգեբանական թրեյնինգների,

վերապատրաստման դասընթացների կազմակերպման շնորհիվ, ինչպես նաև մասնագիտական փորձի և պրակտիկայի միջոցով: Այս բոլոր գործոնների ամբողջական պատկերը կարող է նպաստել մանկավարժական գործունեության արդյունավետության զարգացմանն ու ապահովմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, - Երևան, Մանկավարժ, - 2004, - 455 էջ
2. Деркач А. А., Исаев А. А., Педагогическое мастерство тренера. – Москва, - ФиС. – 1981, - 375с.
3. Ильин Е. П. Психология физического воспитания. - С.-Петербург. - РГПУ им. А.И. Герцена».- 2000. – 486с.

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂԻ ԿՈՄՊԵՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱԲԱՅԱՆ Հ. Ա., ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ Ա. Ռ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Կատարվել է ուսումնասիրություն՝ բացահայտելու մարզական լրագրության մասնագետի պրոֆեսիոնալ կայացման և մասնագիտության հոգեգրամմայի առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքները, գործնական հիմնավորումները կապահովեն առավել հմուտ և գործարար լրագրողների մուտքը մարզաշխարհ, ինչը կաջակցի թե՛ մարզաշխարհի, թե՛ հասարակության կապի մերձեցմանն ու սերտ համագործակցությանը:

Առանցքային բառեր: Մարզական լրագրող, հոգեբանություն, հոգեգրամմա:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОМПЕТЕНТНОСТИ СПОРТИВНОГО ЖУРНАЛИСТА БАБАЯН А.А., БАГДАСАРЯН А.Р. ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ

Аннотация. Проведено исследование для выявления профессионального становления и особенностей психограммы спортивного журналиста. Достоверность результатов исследования будет способствовать притоку в мир спорта более профессиональных и опытных журналистов, что безусловно улучшит не только взаимосвязь, но и тесное сотрудничество общества и спорта в целом.

Ключевые слова. Спортивный журналист, психология, психограмма.

PSYCHOLOGICAL PECULIARITIES OF SPORT JOURNALIST'S COMPETENCIES

BABAYAN H. A., BAGHDASARYAN A.R.
**ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
 AND SPORT, YEREVAN, ARMENIA**

Abstract. Research was conducted to identify the peculiarities of professional development and psychogramma of sport reporters. The reliability of the research work results should contribute to their volvement of more experienced sports journalists into sports journalism. It will promote to intensify cooperation between mass media and social sectors.

Keywords. *Sports journalist, psychology, psychogramma.*

Արդիականություն: Հանդիսանալով լրագրության համեմատաբար երիտասարդ ճյուղ՝ մարզական լրագրությունն իր զարգացման կարճ ժամանակահատվածում զգալի առաջընթաց է ապրում, ամբողջ աշխարհում՝ առավելապես մարզական հզոր տերություններում, այն հանդիսանում է լրագրության առաջատար ճյուղերից մեկը:

Մարզական լրագրությունը մեծ դեր է կատարում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի կազմակերպման ու մասսայականացման գործընթացում:

Լրագրողի աշխատանքը սկսվում է առաջին իսկ քայլից՝ գրվելիք նյութի ուսումնասիրությունից, հետազոտությունից: Հնարավոր է, որ գրուցակիցները ներկայացնեն իրենց «պատճառաբանությունները», յուրաքանչյուրը՝ իր «ճշմարտությունը»:

Շատ դեպքերում գրուցակիցը փորձում է մասնագիտորեն ապակողմնորոշել լրագրողին՝ նկատի ունենալով նրա փորձառության պակասը կամ ոչ քաջատեղյակությունը այսինչ հարցում: Հետևաբար, վերջինս պետք է նախապես լավ ուսումնասիրի փաստը, գերազանց տիրապետի մասնագի-

տությանը և արդյունքում, ընթերցողին հրամցնի իր շրջափակած խնդրի ճիշտ պատասխանը, տա իրական պատկեր:

Մարզական լրագրողի գործունեությունը նպատակաուղղված է ֆիզկուլտուրային շարժման քարոզչությանը, մարզական տեղեկությունների օպերատիվ կերպով հավաքագրմանն ու տարածմանը, մարզակյանքի լուսաբանմանը, էական հարցերի արծարծմանը, դրանց մասնագիտական վերլուծությանը:

Այսօր մարզական լրագրողի աշխատանքային գործունեության մեջ գունագեղության և ինքնատիպության բացառիկ հնարավորություն է ընձեռված, սակայն քչերն են օգտվում այդ հնարավորությունից: Մրա բացատրությունը կարող է լինել այն, որ մարզական լրագրության գիտական-տեսական ուսումնասիրությունը Հայաստանում արհեստավարժ հիմքերի վրա դրված չէ և ավանդական-դասական լուրերի լուսաբանման պես բավականաչափ լուրջ վերաբերմունքի չի արժանանում:

Հետազոտության նպատակը: Հնարավորինս ամբողջական բնութագրել ժամանակակից մարզական լրագրող մասնագետի մասնագիտական կոմպետենտության և մասնագիտական պատրաստվածության հոգեբանական հիմնահարցերը:

Հետազոտության խնդիրները: 1. Բացահայտել մարզական լրագրողի անձի և մասնագիտության սոցիալ – հոգեբանական առանձնահատկությունները, 2. կազմել մասնագիտական հոգեգրամմա:

Մեթոդները: 1. Լրագրության վերաբերյալ (ընդհանուր և մարզական) մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, «Մարզական լրագրողի մասնագիտական հոգեգրամմա» անկետային մեթոդի ներդնում, մասնագետի կոմպետենտության հոգեբանամանկավարժական

գործոնների սուբյեկտիվ գնահատման մեթոդ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական վերլուծությունն ու համեմատական մշակում:

Հետազոտությունը իրականացվել է պրոֆեսիոնալ լրագրողների և ինստիտուտի ուսանող-լրագրողների շրջանում (20-ական մասնակից, յուրաքանչյուր խմբում): Հետազոտության ցուցանիշները ենթարկվել են խմբային դասակարգման և համեմատական վերլուծության, ինչի արդյունքում պարզվել է:

Հոգեբանական ցուցանիշների առավել կայուն ու ադեկվատ գնահատումը նկարագրվում է կայացած լրագրողների պատասխաններում, ուսանող-լրագրողների մոտ այն տատանվում ու խիստ տարբերակվում է: Օրինակ՝ մասնագետները հոգեբանական ֆունկցիաների շարքում առաջնային գործոն համարելով մտածողությունը, նշում են նրա առանձնահատկությունները (վերլուծություն, համադրություն, դատողություն, մտահանգում): Ուսանող լրագրողները նշում են ուղղակի մտածողություն, հիշողություն, խոսք և այլն: Այն ինչ մարզական լրագրողները անգամ անդրադառնում են մարզական տերմինաբանությանը և խոսքի կուլտուրային:

• Ուսանող-լրագրողների պատասխանները վկայում են, այն փաստը, որ ըստ կուրսերի գնահատման, լրագրողի պրոֆեսիոնալ պատրաստության համակարգում հոգեբանական ցուցանիշների դերը առավելապես կարևորվում է 3-րդ և 4-րդ կուրսերի հետազոտվողների պատասխաններում: Այսինքն ուսումնական գիտելիքները հոգեբանությունից և այլ առարկաներից ձևավորում են նրանց աշխարհայացքներն ու մասնագիտական պատրաստությունը, հաղորդելով դրանց պրոֆեսիոնալ բնույթ:

• Ուսանող-լրագրողների պատասխանների համեմատական վերլուծությունը վկայում է, որ պրոֆեսիոնալ կայաց-

մանը զուգընթաց ըստ կուրսերի կարևորվում է հոգեբանամանկավարժական, բժշկակենսասաբանական ու մարզական գիտելիքների դերը մարզական լրագրողի մասնագիտական կոմպետենտության կայացման գործում:

- Հետազոտվողների սուբեկտիվ գնահատման ցուցանիշները վկայում են, որ երկու խմբերի միջին բալլի մեծության (10 և ավել) հոգեգրամմայում տեղ են գտել ըստ մեծության հետևյալ հոգեբանական գործոնները՝ գրական մասնագիտական խոսք (15 բալ), մտածողություն (14 բալ), հիշողություն (13.5 բալ), երևակայություն (12,7բալ) հույզեր և զգացմունքներ (12 բալ), կամային հատկություններ(11,5 բալ), ուշադրություն (11 բալ),ըմբռնում (10 բալ):

- Առավել նշանակալի է մարզական լրագրող մասնագետի գնահատման բուն մարզական գիտելիքների իմացության շարքը

- բարձր նվաճումների սպորտ, էլիտար սպորտ, օլիմպիական սպորտ, շարժում, գաղափարախոսություն, զանգվածային սպորտ, առողջարարական սպորտ, հաշմանդամային սպորտ, հատուկ օլիմպիադաներ:
- ֆիզիկական կուլտուրա, նրա կրթական դաստիարակչական, առողջարարական դերը, առողջ ապրելակերպ, ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրները
- ֆիզիկական կուլտուրայի ներդրման արդի խնդիրները (ընտանիք, նախադպրոցական հիմնարկներ, դպրոց, բուհ, բուժական ֆիզիկական կուլտուրա)
- մարզական կառույցներ, ժամանակակից տեխնոլոգիաներ և այլն:

Եզրակացություն: Ունենալով հոգեբանական գիտելիքների բավարար պաշար՝ յուրաքանչյուր մարզական լրագրող ավելի խորն ու հիմնավոր կմեկնաբանի մրցման ընթացքը,

ավելի ճիշտ կվերլուծի ձախողումները կամ, թեկուզև, հաջողությունների հիմքերն ու դրդապատճառները, ապահովելով լսարանի իմացական, նույնիսկ գիտատեղեկատվական պահանջը:

Հետազոտության արդյունքները հիմք հանդիսացան ընտրելու մարզական լրագրողի մասնագիտության հոգեգրամմայի և կոմպետենտության հիմնական հոգեբանամանկավարժական ցուցանիշները ըստ վերը ներկայացված վերլուծության արդյունքների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբայան Հ. Ա. «Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում», Երևան, 2007թ. էջ 101-111
2. Եղիազարյան Ռ. «Զրույցներ լրագրության հոգեբանության մասին», Երևան, 2004 թ.- էջ 7-49
3. Լազուտինա Գ. Բ. «Լրագրողի պրոֆեսիոնալ էթիկան», - Մ. 1999թ.
4. Շառոյան Ռ. Դ. «Ամենահաս ժուռնալիստիկա», Երևան, 2008 թ. - էջ 6-10
5. Ворошилов В. В. «Журналистика», Санкт-Петербург, 2000 - стр.128-129
6. Лазутина Г. В. «Профессиональная этика журналиста», Москва , 1999 -стр.166-168
7. Рошин С. К. «Психология и журналистика», М. 1989 - стр. 25-30

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Ա., ԷԼՈՅԱՆ Ն. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Ֆուտբոլ մարզաձևը յուրահատուկ պահանջներ է ներկայացնում մարզիկի առանձին հոգեկան ֆունկցիաների դրսևորումներին, որը անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնամարզական գործընթացում: Այդ գործընթացի կարևորագույն մասը կազմում է հոգեբանական պատրաստությունը, որի խնդիրներից մեկն է այդ հոգեկան ֆունկցիաների զարգացումը և հատկապես ուշադրության կենտրոնացվածությունը, բաշխումը, փոխակերպումը, ծավալը:

Առանցքային բառեր: *Հոգեբանական պատրաստություն, ծավալ, կենտրոնացվածություն, ինտենսիվություն, ուշադրություն, մասնագիտական ըմբռնում, հսկում:*

ЗНАЧЕНИЕ СВОЙСТВ ВНИМАНИЯ В ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКЕ ФУТБОЛИСТОВ ГРИГОРЯН А. А., ЭЛОЯН Н. А. ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ

Аннотация. Футбол, как вид спорта, предъявляет индивидуальные требования к проявлениям психических функций, на которые в тренировочном процессе нужно обратить внимание. Наиболее важной частью этого процесса является психологическая подготовка, задачей которой является развитие выше указанных психических функций, в частности, сосредоточение, распределение, трансформация и объем внимания.

Ключевые слова. *Психологическая подготовка, объем, концентрация, интенсивность, внимание, специфическое восприятия, контроль.*

THE IMPORTANCE OF THE ATTENTION AS A PROCESS IN CONNECTION WITH PSYCHOLOGICAL READINESS OF FOOTBALL PLAYERS

GRIGORYAN A.A., ELOYAN N. A.

ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT, YEREVAN, ARMENIA

Abstract. Football as a sport has peculiar requirements to personalize the mental functions of a player. The most important part of this process is the psychological point of view. One of the major problems in this aspect are the development of these mental functions, and in particular, the focus, distribution, transformation of the attention as well as the volume.

Keywords. *Psychological training, scale, concentration, intensity, attention, professional comprehension, control.*

Արդիականությունը: Ֆուտբոլը պատկանում է թիմային-խաղային այն մարզաձևերի խմբին, որոնք տարբերվում են իրենց առանձնահատկություններով՝ դասվելով մարզաձևերի առանձին խմբի: Ֆուտբոլ մարզաձևով մարզվողներին անհարժեշտ է հոգեբանական հատուկ պատրաստություն, որը պետք է հաշվի առնել ուսումնամարզական գործընթացում: Այդ գործընթացի բաղկացուցիչ մասը հոգեբանական պատրաստությունն է, որի խնդիրներից է հոգեկան պրոցեսների ուղղորդված զարգացումը, առաջին հերթին, ըմբռնման հատուկ ձևերի զարգացումը, ինչպիսիք են՝ գնդակի, խաղային տարածության, ժամանակի զգալու կարողությունը, ընկալումների և վերարտադրման արդյունավետությունը, բնեռուն ուշադրության կենտրոնացումը և բաշխումը, խաղային իրավիճակն արագ գնահատելու և որոշումներ կայացնելու, սեփական գործողությունները վերահասկելու ընդունակությունները[3]:

Ժամանակակից ֆուտբոլում բոլոր ուժեղագույն ակումբների խաղային մակարդակը գրեթե հավասարվել է, և մրցակցության ելքը հիմնականում կախված է տվյալ թիմի հոգե-

բանական պատրաստությունից, ուստի և ավելի է կարևոր-վում նպատակաուղղված հոգեբանական պատրաստությու-նը:

Շատ է կարևորվում անհատ ֆուտբոլիստների և թիմային գործողությունների կատարման արդյունավետ համագոր-ծակցությունը, փոխհարաբերությունները խաղադաշտում և նրանից դուրս, ակումբային ավանդույթները և այլն, որոնք անշեղորեն անդրադառնում են յուրաքանչյուրի ինտելեկ-տուալ և հոգեբանական պատրաստության վրա [1,4,5]:

Խնդիրները: Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել ուշադրության հատկությունները և գործնական կիրառումը մարզումների ընթացքում, ինչը կօգնի մարզիկներին կատա-րելագործել իրենց սպորտային վարպետությունը:

Մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությանը մաս-նակցել են սպորտային տարբեր որակավորում ունեցող ՀՖԿՄՊԻ-ի 60 ֆուտբոլիստ-ուսանողներ:

Մարզումների և մրցումների ժամանակ իրականացվել են դիտումներ, ինչպես նաև անցկացվել են ուշադրության ծա-վալը, կենտրոնացվածությունը, պահպանումը որոշող թես-տեր:

Կիրառվել են Լանգոլդի «սրբագրական աղյուսակը», «խառը հերթականությամբ տրված 1-90թվերի», մեթոդիկան և «Լաբիրինթ» թեստը [2,6]:

Հետազոտություններն անցկացնելիս կիրառել ենք արդի սպորտում հայտնի գիտապրակտիկ մեթոդիկան:

Արդյունքները: Ուսումնասիրության արդյունքում պարզ-վել է, որ ավելի մեծ սպորտային փորձ ունեցող ֆուտբոլիստ-ների մոտ (10 և ավելի տարի) բավական լավ են զարգացած ուշադրության բոլոր հատկությունները, ինչն էլ թույլ է տալիս մարզիկներին արագ գնահատել խաղային իրադրությունը, որոշումներ կայացնելու և վերահսկելու գործողության մյուս

կարևոր օբյեկտներին: Ավելի քիչ մարզական փորձ ունեցող ֆուտբոլիստները (10-ից պակաս տարի) զիջում են փորձառուներին ուշադրության զարգացվածության հատկություններով: Ինչպես նաև, հոգնածության հետևանքով նկատվում է ուշադրության կենտրոնացման նվազում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում խաղի արդյունավետության վրա: Դա ֆուտբոլիստների մոտ նկատելի է հատկապես մրցումների վերջնամասում:

Պարզեցինք նաև, որ մարզիկի անհատական առանձնահատկություններով պայմանավորված, ուշադրության ինտենսիվությունը կարող է երկար ժամանակ ինքնաբերաբար պահպանվել (մոտ 40 րոպե): Լարված աշխատանքի դեպքում ուշադրությունը կարող է պահպանվել 15-20 րոպե և ավելի: Այնուհետև տեղի է ունենում ուշադրության շեղում՝ 2-3 վայրկյան, որից հետո կրկին շարունակվում է կենտրոնացման փուլը: Կարճատև շեղումները խանգարում են փորձառու մարզիկին, բայց և հնարավորություն են տալիս մրցումներին ավելի ուշադիր լինել: Ուշադրության կենտրոնացման և ինտենսիվության նվազումը կարող է նկատվել այն մարզիկների շրջանում, որոնց մոտ պակասել է ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Ուշադրության ինտենսիվության, ծավալի, կենտրոնացվածության և բաշխման բարձրացում նկատվում է բարձր մարզական պատրաստություն ունեցող մարզիկների մոտ:

Մարզման գործընթացում անհրաժեշտ է պարբերաբար վերահսկել մարզիկների հոգեկան պրոցեսների դրսևորումները, ինչպես օրինակ, ուշադրության ինտենսիվությունը, ծավալը, կայունությունը:

Եզրակացություն: Մրցակցային գործընթացում ֆուտբոլիստի, հատկապես «կապող օղակի» դիրքում հանդես եկող մարզիկի հաջող դրսևորման համար անչափ կարևոր են ու-

շաղրության հատկությունները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մարզումային գործընթացում, հատկապես երիտասարդ մարզիկների հետ աշխատանքում, այդ խնդրին դեռևս բավարար ուշաղրություն չի դարձվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբայան Հ. Ա., Ստեփանյան Ա. Գ., Գեղամյան Վ. Ղ., Սոֆյան Թ. Շ. Հոգեբանության գիտահոտագոտական մեթոդները սպորտում: Ուսումնական ձեռնարկ, Երևան 2016թ.
2. Գեղամյան Վ. Ղ. Հոգեբանական պատրաստության յուրահատկությունները ըմբշամարտում: Ատենախոսություն, Երևան 2016թ.
3. Гагаева Г. М. Психология футбола. М. 1969.
4. Марищук В. Л., Блудов Ю. М., Плахтенко В. А. Методики психодиагностики в спорте. М. 1984
5. Родинов А. В. Психологическая диагностика спотивных особенностей М. ФИС. 1973.
6. Степанян А. Г. Сравнительный анализ личностных качеств спортсмена в специфических условиях деятельности, кандидатских диссертаций, Ереван 2006г.

**ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ
 ՀՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՄՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԻՑՅԱՆ Բ. Լ.

ՀՀ ՊՆ Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամփոփագիր: Բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունների հիմնական խնդիրը՝ բարձր որակավորում ունեցող սպաների պատրաստումն է: Այդ խնդրի լուծման նպատակով Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում բազմաթիվ առարկաների ցանկում ընդգրկված է նաև ֆիզիկական պատրաստությունը:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտների կամային հատկությունների և ֆիզիկական պատրաստվածության կատարելագործման նպատակով անցկացվել է գիտափորձ, որի արդյունքում կազմվել են մոդելային սանդղակներ, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտել ցածր պատրաստված կուրսանտներին և ուղենշել նրանց մոտ այդ հմտությունների զարգացման մեթոդիկան:

***Առանցքային բառեր.** Ռազմակիրառական հմտություններ, նպատակասլացություն, համառություն, վճռականություն, գիտափորձ, արգելագոտու հաղթահարում, մաթեմատիկական վերլուծություն, մոդելային սանդղակներ:*

**ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ
 НАВЫКОВ И ВОСПИТАНИЯ ВОЛИ КУРСАНТОВ
 ЕРИЦЯН Б. Л.
 МИНИСТЕРСТВО ОБАРОНЫ РА ВОЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
 ИМЕНИ В. САРКИСЯНА**

Аннотация. Главной задачей Высших Военных учебных заведений является подготовка высококвалифицированных офицерских кадров. Решая эту важную задачу в Военном университете им. В. Саргсяна будущим офицерам преподают много необходимых предметов, в том числе и физическую подготовку.

С целью воспитания воли и совершенствования физической подготовки и, в частности, ее военно-прикладной составляющей, был проведен педагогический эксперимент, в результате которого для курсантов были разработаны модельные оценочные шкалы, благодаря которым стало возможным конкретизировать и дифференцировать совершенствование военно-прикладных навыков.

Ключевые слова. Военно-прикладные навыки, настойчивость, решительность, педагогический эксперимент, преодоление препятствий.

**FEATURES OF DEVELOPMENT OF MILITARY-APPLIED SKILLS
 AND EDUCATION OF WILL OF CADETS
 YERITSYAN B.L.
 THE MINISTRY OF DEFENSE OF RA MILITARY UNIVERSITY
 AFTER V. SARGSYAN**

Abstract. The main task of the Military University is to train highly qualified officers. Solving this important task future officers are given necessary disciplines including physical training in the Military University after V. Sargsyan.

In order to improve physical training and, in particular, its military-applied component, a pedagogical experiment was conducted as a result, model estimated scales have been compiled for cadets, thanks to which it became possible to specify and to differentiate the improvement of military-applied skills.

Keywords. Military-applied skills, persistence, determination, pedagogical experiment, mathematical analysis, model scales, overcoming obstacles.

Արդիականությունը: Ցանկացած ռազմական ուսումնական հաստատությունների գերագույն խնդիրն է բարձր որակավորում ունեցող զինվորականների պատրաստումը: Մարտական պատրաստության շուրջ տասնյոթ առարկաների՝ կրակային պատրաստություն, ռազմական տեղագրություն, շարային պատրաստություն, մեքենավարում և այլն, շարքում հատուկ տեղ է զբաղեցնում ֆիզիկական պատրաստությունը:

Ֆիզիկական պատրաստության մասնագիտակիրառական առանձնահատկություններին անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ [2, 3], նշելով դրա կարևորությունը ուժային կառույցների և հատկապես ազգային բանակի համար:

Կարևոր է նշել, որ ռազմակիրառական շարժողական ընդունակությունների կատարելագործումը և կամքի դաստիարակությունը պարապմունքների ժամանակ տեղի է ունենում փոխադարձ կապի և ներգործման պայմաններում: Իսկ, ռազմակիրառական շարժողական հմտությունների նպատակալաց և գիտակցված կիրառումը հեշտացնում է դժվարությունների հաղթահարումը և նրանց տիրապետման արդյունքում աստիճանաբար դրսևորվում ու ձևավորվում են որոշակի կամային հատկություններ՝ համառություն, տոկունություն, վճռականություն և այլն:

Հետազոտության նպատակը: ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում անցկացվել է գիտափորձ բոլոր կուրսասանտների ներգրավմամբ, որոշելու համար նրանց ռազմակիրառական հմտությունները ձևավորող գործոնները, բացահայտել կուրսասանտների առավել կարևոր շարժողական ընդունակությունները, կազմել նրանց ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակները և նախապատրաստել գործնական առաջարկություններ մասնագետների համար:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության խնդիրներն են՝ երկամյա գիտափորձի արդյունքում ուսումնասիրել

կուրսանտների ֆիզիկական զարգացման փոփոխությունները, պարզել ֆիզիկական պատրաստության դասերի ծանրաբեռնվածությունը և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները, մշակել և գիտափորձի արդյունքներով հիմնավորել ռազմակիրառական հմտությունների զարգացման և կամքի դաստիարակության արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները: Դրված խնդիրների լուծման համար ընտրվեցին հետևյալ մեթոդները՝ մանկավարժական գիտափորձ, մանկավարժական դիտարկում, շարժողական ընդունակությունների թեստավորում, մաթեմատիկական վերլուծություն:

Համալսարանի բոլոր ֆակուլտետների կուրսանտների ներգրավմամբ անցկացվեց մանկավարժական գիտափորձ՝ գտնելու համար գիտականորեն հիմնավորված տվյալներ, որոնք թույլ կտան գնահատել կուրսանտների ֆիզիկական պատրաստության կազմակերպման գործընթացը և հազեցնել այն վարժությունների համալիրներով ու հնարքներով, ինչն էլ, իր հերթին, կնպաստի շարժողական ընդունակությունների բարելավմանը և կամային հատկությունների զարգացմանը:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ գիտափորձի արդյունքում առաջին անգամ ներկայացվում են ռազմական համալսարանի կուրսանտների մասնագիտակիրառական շարժողական ընդունակությունների ցուցանիշները և կազմվել են դրանք արտացոլող մոդելային սանդղակներ:

Չափագրումները անցկացվել են Մոսկվայի անթրոպոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված մեթոդիկայով, ըստ որի ֆիզիկական զարգացման հիմնական հատկանիշներն են ընդունվել մարմնի զանգվածը, հասակը և կրծքավանդակի շրջագիծը:

Շարժողական ընդունակությունները որոշելու նպատակով ընտրվել են վեց վարժություններ՝ վազք 100 մետր, թիվ 24՝ ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում, ձգումներ պտտաձողի վրա, սեղմումներ գետնի վրա, թիվ 25՝ հատուկ ստուգողական վարժություն՝ արգելագոտիներում և Հարվարդյան ստեպ թեստը:

2) На способность успешно сочетать спортивную, учебную деятельность и личную жизнь наиболее сильное влияние оказывает «умение планировать свое время», «требовательность к себе», «уверенность в себе» и «мотивация» (8,79±0,13; 8,18±0,12; 8,16±0,11 и 8,0±0,17 соответственно), наименее сильное - «коммуникативные навыки», «физическая форма», «спортивный опыт» (6,21±0,12; 6,45±0,11; 6,63±0,15 соответственно по 10-тибалльной шкале).

Таким образом, обучение спортсменов базовым психологическим знаниям и умениям, связанными с развитием способности к реализации «двойной» карьеры, начиная с первых этапов занятий спортом (например, в рамках содержания психологического раздела Программ спортивной подготовки по видам спорта), позволит формировать внутренний ресурс для успешного сочетания спортивной, учебной деятельности и других сфер жизни и у высококвалифицированных спортсменов.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Андропова Е.Ю. Проблема сочетания спортивной и учебной деятельности: психологический аспект / Е.Ю.Андропова, Е.Е.Хвацкая // Материалы XIII Международной научно-практической конференции психологов физической культуры и спорта «Рудиковские чтения - 2017» (11-12 мая 2017); под общ.ред. Байковского Ю.В., Вошинина А.В. ; М-во спорта РФ, Федер. гос. бюджет. образоват. учреждение высш. образования «Рос. гос. ун-т физ. культуры, спорта, молодежи и туризма (ГЦОЛИФК)», 2017. - С. 94 - 98.
2. Благинин А.А. Исследование психологической адаптации спортсменов, завершающих свою спортивную карьеру / А.А.Благинин, Н.С.Бар, С.Н.Шихвердиев // Вестник Ленинградского государственного университета им.А.С.Пушкина. - 2015. - №2. - С.64-76.
3. Горская Г.Б. Психологические ресурсы и барьеры самореализации спортсменов на разных этапах спортивной карьеры / Г.Б.Горская // Материалы XIII Международной научно-практической конференции психологов физической культуры и спорта «Рудиковские чтения - 2017» (11-12 мая 2017); под общ.ред. Байковского Ю.В., Вошинина А.В. ; М-во спорта РФ, Федер. гос. бюджет. образоват. учреждение высш. образования «Рос. гос. ун-т физ. культуры, спорта, молодежи и туризма (ГЦОЛИФК)», 2017. - С.128 -132.
4. Давлеткалиев Д.К. Особенности социальной адаптации спортсменов-профессионалов после ухода из большого спорта: монография / Д.К. Давлеткалиев. – М.: Информационно-внедренческий центр «Маркетинг», 2002. – 100 с.
5. Кузьменко Г.А. Особенности соподчинения интеллектуальных и психомоторных способностей у подростков в спортивной деятельности / Г.А.Кузьменко // Национальные программы формирования здорового образа жизни, междунар. науч.-практ. конгр. (2014 ; Москва). Международный научно-практический конгресс «Национальные программы формирования здорового образа жизни», 27–29 мая 2014 г. – В 4 т. –Т. 2. X Международная научно-практическая конференция психологов физической культуры и спорта «Рудиковские чтения» : материалы / под общ. ред. В. Ф. Сопова ; М-во спорта Рос. Федерации, Департамент образования г. Москвы, Федер. гос. бюджет. образоват. учреждение высш. проф. образования «Рос. гос. ун-т физ. культуры, спорта, молодежи и туризма (ГЦОЛИФК)». – М., 2014. – С.251-253.

6. Сенаторова О.Ю. Психолого-педагогические условия социальной адаптации спортсменов, завершающих спортивную карьеру: автореф. ... дис. ганд. пед. наук. – М.: 2006. – 23с.

7. Стамбулова Н.Б. Психология спортивной карьеры: учебное пособие / Н.Б.Стамбулова. – СПб. Издательство «Центр карьеры», 1999. – с.368.

8. Теленков Д.В. Влияние отношения к учебной и спортивной деятельности на их успешность у студентов вузов физической культуры: автореф. дисс. ... канд.психол.н. / Д.В.Теленков; НГУ им.П.Ф.Лесгафта. – СПб.. 2009. – 24с.

9. Хвацкая Е.Е. Проблема ранней спортивной специализации (профессионализации) / Е.Е.Хвацкая, Н.Е. Латышева / /Вестник Псковского государственного университета. Серия: Психолого-педагогические науки. - 2015. - № 1.- С. 194-201.

ԾԱՆՐՈՂՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

ԱԲԵԼՅԱՆ Վ.Մ., ԴԱՆԻԵԼՅԱՆ Ա.Ռ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Հոդվածում դիտարկվում են հոգեբանական հնարքների կիրառմամբ ծանրորդների սպորտային արդյունքների բարձրացման հարցերը: Ծանրամարտում ձևավորվել և այժմ գործարկվում է ծանրորդների ընտրության և պատրաստության բավականին արդյունավետ տեխնոլոգիա: Դա հաստատվում է միջազգային ասպարեզում մարզիկների բարձր նվաճումներով: Միջազգային մրցումներում մշտապես ծավալվող մրցակցությունը էականորեն ազդում է սպորտային արդյունքների մակարդակի վրա:

Առանցքային բառեր: Հոգեբանական պատրաստություն, առտոզեն, մտաշարժիչ մարզում, ծանրորդ:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЕМЫ ПОВЫШЕНИЕ СПОРТИВНЫХ РЕЗУЛЬТАТОВ ТЯЖЕЛОАТЛЕТОВ АБЕЛЯН В.М., ДАНИЕЛЯН А.Р. ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ

Аннотация. В статье рассматриваются вопросы повышения спортивных результатов тяжелоатлетов с использованием психологических приемов. В тяжелой атлетике сегодня сформирована и функционирует довольно эффективная технология отбора и подготовки спортсменов высокой квалификации. Это подтверждается высокими достижениями спортсменов на международной арене. Постоянное расширяющееся конкуренция круга претендентов, на международных соревнованиях, естественным образом влияет на уровень спортивных результатов.

Ключевые слова: психологический, подготовка, аутогенный, идеомоторный, тренировка, тяжелоатлет.

**PSYCHOLOGICAL ADMISSIONS INCREASING THE
SPORT RESULTS OF WEIGHTLIFTERS
ABELYAN V.M., DANIELYAN A.R.
ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT, YEREVAN, ARMENIA**

Abstract. In the article increase of sports results in heavy athletics is opened at use of psychological admissions. In heavy athletics today it is generated and rather effective technology of selection and preparation of sportsmen of high qualification functions. It proves to be true high achievements of the sportsmen on international scene. Constant expansion of a circle of applicants for high achievements at the international competitions significantly influences a level of a competition among the strongest sportsmen of the world.

Keywords: *psychological, preparation, autogenous, ideomotor, training, weightlifter.*

Արդիականությունը: Սպորտային սուր մրցակցության պայմաններում, որտեղ մրցակիցների պատրաստվածության մակարդակները գրեթե հավասար են, բացառիկ նշանակություն են ձեռք բերում մարզիկի բարոյականային որակները, նրա հոգեբանական կայունությունը, պատրաստականությունը՝ պայքարելու բարդ, երբեմն էլ փոփոխվող կամ անհարմար պայմաններում և հասնելու առաջադրված նպատակին:

Մարզիկի հոգեբանական ապրումները բացառապես բարդ են և բազմաբովանդակ: Լարվածությունը, կաշկանդվածությունը, ձախողման վախը և կպշուն այլ մտքերը իրենց վրա ուշադրություն են գրավում, ստեղծում են հոգեբանական արգելք, որի հաղթահարումը ոչ բոլորին է հաջողվում:

Հոգեբանական պատրաստության նպատակը մարզիկի ընդունակությունների և հոգեբանական գործընթացների զարգացումն է, որն անհրաժեշտ է վարպետության բարձր մակարդակին հասնելու, հոգեբանական կայունության և մրցումներին մասնակցելու պատրաստականության համար:

Վ.Ա. Չապորոժանովը [2] մրցումների հոգեբանական պատրաստականությունը բնութագրում է հետևյալ որակներով՝ վստահություն իր ուժերին, մինչև վերջ պայքարելը՝ ուժերի լիարժեք ներդրմամբ, հուզական գրգռվածության օպտիմալ մակարդակը, խոչընդոտների, արտաքին և ներքին անբարենպաստ գործոնների նկատմամբ բարձր կայունությունը, սեփական գործողությունների, ինչպես նաև սպորտաշին պայքարի փոփոխվող, մրցակցության բարձր լարվածության և հուզականության պայմաններում զգացմունքների և վարքագծի կառավարման ընդունակությունը:

Դրա համար անհրաժեշտ է մարզիկին սովորեցնել օգտվել այն միջոցներից և մեթոդներից, որոնք մրցումներին պատրաստականության երաշխիք են հանդիսանում: Դրանց թվին են պատկանում՝

- մարզումների ժամանակ շարժողական ակտիվության օպտիմալ նախատրամադրվածության ձևավորումը,
- հանգստի և գործողության պայմաններում ինքնակարգավորման միջոցներին տիրապետումը,
- ուշադրության ակտիվության մակարդակում հուզական վիճակի ինքնակարգավորման միջոցներին տիրապետումը,
- կամային և ֆիզիկական առավելագույն ճիգերի ժամանակ ինքնակարգավորման և կենտրոնացվածության միջոցների տիրապետումը,
- ինքնակարգավորման միջոցների և մեթոդների կատարելագործմանն ուղղված վարժություններ:

Ծանրորդի հոգեկան կայունության վիճակը հաստատուն կերպով խարսխվում է նրա ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական և բարոյականային պատրաստվածության կողմերի վրա:

Ծանրամարտում առավել լայնորեն գործածվում են հոգեբանական հետևյալ միջոցներն ու մեթոդները՝ հոգեբանական վիճակի կարգավորումը (ներշնչում, աուտոգեն մարզում) և մկանների թուլացման միջոցները (ռելաքսացիա):

Ծանրորդի վրա ներգործության վերը թվարկած միջոցներն ու մեթոդները կարող են իրագործվել արտաքին (մարզչի ազդեցությունը, բժիշկ-հոգեթերապևտ, հոգեբան) և ներքին (ինքնաներգործություն, հոգեբանական առանձին ընդունակությունների զարգացման ուղղությամբ ինքնահամոզում) ճանապարհներով:

Նպատակը: Աշխատանքի նպատակն է՝ ծանրամարտում հոգեբանական հնարքների օգնությամբ սպորտային արդյունքների բարձրացման հիմնական գործոնների վերլուծությունն ու ընդհանրացումը:

Արդյունքներ: Ծանրամարտում աուտոգեն մարզումները մշակվել են Ա.Ս. Մեդվեդևի կողմից [4]: Այս մեթոդի օգնությամբ կարելի է սովորել թուլացնել մկանները, ներշնչել հանգստի վիճակ, առաջացնել սիրտ-անոթային, շնչառական և մարսողական համակարգերի աշխատանքի հանգստություն: Աուտոգեն մարզման մեթոդը հիմնված է նրա վրա, որ լիարժեք թուլացման վիճակում մտովի կենտրոնացման և ինքնահամոզման ճանապարհով կարելի է իրագործել ֆիզիկական և հոգեկան վիճակի ինքնակարգավորումը:

Վերը նշվածի համար Ա.Ս. Մեդվեդևը առաջարկում է հատուկ վարժությունների ցիկլեր, որոնք դարձել են դասական՝ իրանի մկանների թուլացման, արյունատար անոթների լայնացման, սրտի աշխատանքի կարգավորման, շնչառության հսկողության, ներքին օրգանների և ուղեղի աշխատանքների համար:

Նրա համար, որպեսզի աուտոգեն մարզումների դեպքում կիրառվող ինքնահսկողությունը լինի արդյունավետ, անհրաժեշտ է հավաստալ դրա ներգործությանը:

Եթե ծանրորդը մարզչի օգնությամբ լրջորեն պատրաստվում է մրցումներին, ապա նա, որպես կանոն, մրցակցային բարդ իրավիճակներում հաջողությամբ հաղթահարում է անսպասելի դժվարությունները: Սակայն պատահում են հոգեբանական այնպիսի խանգարումներ, որի դեպքում մարզիկի վարքագիծը նկատելիորեն փոխվում է: Վ.Ն. Պլատոնովը [5] առանձնացնում է այդ փոփոխությունների հետևյալ ձևերը.

- արգելակային ձև՝ ուշադրության և մտավոր գործողությունների նկատմամբ կարողությունների նվազում, նոր պայմաններում վարժված գործողությունների կատարման կարողությունների վատթարացում, ընդհանուր մկանային ակտիվության նվազում,

- ազդակային ձև՝ սխալների քանակի ավելացում, քիչ մտածվող գործողություններին հակվածությունը, չարդարացված շտապողականությունը, իրարանցումը, որոշումների արագ փոփոխումը,

- ընդհանրացված ձև՝ շարժողական նկատելի գրգռվածություն, շարժումների կոորդինացիայի կտրուկ վատացում, սխալների ավելացում:

Ծանրորդը իր մարզչի ուղեկցությամբ պետք է հստակորեն որոշի մրցումներին մասնակցության դրդապատճառները, որոնք մղում են ուժերի դրսևորմանը:

Ծանրորդի հոգեբանական պատրաստության միջոցների զինանոցում ցուցադրելի տեղ պետք է զբաղեցնեն գիտակցության հսկողությամբ վարժությունների երևակայական կատարումը: Երբ մարզիկը մտովի պատկերացնում է կատարվող շարժումը կամ գործողությունը, նրա մոտ արագանում է զարկերակն ու շնչառությունը, բարձրանում է մարմնի ջերմաս-

տիճանը, տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնք իրենց տեղն ունեն իրական շարժումների դեպքում:

Ըստ Վ.Ա. Զապորոժանովի [2] տվյալների՝ մտաշարժիչ մարզումներից հետո հասնում են շարժումների մինչև 34% ճշգրտության, 16,8% արագության և ուժի 3,3% բարելավմանը:

Ինքնաներշնչման ժամանակ դրված նպատակը և խնդիրները կարևորվում են նրանով, թե որ ձևով են նրանք արտահայտվում՝ հասնել հաղթանակի, թե խուսափել պարտությունից: Ըստ Պ.Պ Մատվենի տվյալների [3]՝ առաջին տեսակի նպատակադրումը իրագործվում է 84% դեպքերում, իսկ երկրորդը՝ միայն 31% դեպքերում:

Մրցումների նախօրեին առաջարկվում է անցկացնել աուտոգեն մարզման հանգստացուցիչ մաս, իրականացնել զբոսանք անտառում և գետի ափին, դիտել զվարճալի ֆիլմ, լսել նախընտրած երաժշտություն և այլն: Հարկավոր է կրկին սթափ գնահատել սեփական ուժերը, համադրել դրանք հակառակորդների ուժերի հետ, համոզել իրեն հակառակորդի նկատմամբ հաղթանակին, դառնալ վստահ իր նկատմամբ, կշռադատել ապագա պայքարի ողջ ընթացքը, փորձել հակառակորդների մոտ ստեղծել իր ուժերի և հնարավորությունների վերաբերյալ կեղծ պատկերացումներ:

Եզրակացություն: Հատուկ գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ հոգեբանական հնարքները նպաստում են ծանրորդների սպորտային արդյունքների բարձրացմանը: Ծանրամարտի աշխարհի ուժեղագույն հավաքական թիմերի մրցակցային գործունեության ցուցանիշները վկայում են այն մասին, որ օլիմպիական խաղերի մրցանակակիրների և աշխարհի չեմպիոնների սպորտային բարձր նվաճումների տարիքը տատանվում է 24-27 տարեկանի սահմանում: Վերջինս վկայում է այն մասին, որ այդ տարիքում մարզիկները հոգեբանորեն պատրաստված են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Вельский И. В. Основы специальной силовой подготовки высококвалифицированных спортсменов в тяжелой атлетике. Минск, 2000. - С. 206.
2. Запорожанов В. А., Кузьмин А. И., Дяченко В.Ф. Система отбора – важнейший фактор формирования резерва для олимпийский команд. - К., 1993.- С. 136-138.
3. Матвеев П. П. Основы общей теории спорта и система подготовки спортсменов. К., 1999. - С. 318.
4. Медведев А. С., Смирнов В.Е. Уровень спортивного мастерства спортсменов тяжелоатлетов.1995. - С. 25-29.
5. Платонов В. Н. Общая теория подготовки спортсменов в олимпийском спорте. К., 1997. - С. 583.

**ԲՈՆՅՔԱՄԱՐՏԻՎՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ
 ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ա., ԵՖԻՄՈՎԱ Ն.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԻՆՏԵՏՈՒՑ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Աշխատանքում հետազոտվել է բոնյքամարտիկների անձնային տազնապայնության մակարդակը: Իրականացվել է անձնային տազնապայնության և կամային ինքնավերահսկման մակարդակների համահարաբերակցական վերլուծություն: Արդյունքում ստացել ենք դրական և բացասական համահարաբերակցական կապեր:

Առանցքային բառեր: Հոգեկան պատրաստականության վիճակ, վարքագծային համակարգ, մոբիլիզացիա, տազնապայնություն, կամային ինքնավերահսկում:

**ОСОБЕННОСТИ РЕГУЛЯЦИИ ЛИЧНОСТНОЙ
 ТРЕВОЖНОСТИ БОКСЕРОВ
 БАРХУДАРЯН А. А., ЕФИМОВА Н.
 ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
 И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В настоящей работе исследовано уровень личностной тревожности боксеров. Проведен корреляционный анализ между личностной тревожностью и уровнем волевой саморегуляции. Выявлены как положительные, так и отрицательные корреляционные связи между этими психологическими параметрами.

Ключевые слова: *Состояние психологической готовности, система поведенческой активации, мобилизация, тревожность, волевая саморегуляция.*

PECULIARITIES OF REGULATION OF PERSONAL ANXIETY OF BOXERS
BARKHUDARYAN AA, EFIMOV N.
ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND SPORT, YEREVAN, ARMENIA

Abstract. In this paper the level of personal anxiety of boxers has been studied and made a correlation analysis between dimensions of personal anxiety and level of volitional self-regulation. Both positive and negative correlations were revealed between above noted these psychological parameters

Keywords: *psychological readiness, behavioral activation systems, mobilization, volitional self-regulation.*

Արդիականությունը: Մարզիկի հոգեբանական վիճակը այն կարևոր գործոններից մեկն է, որը ապահովում է նրա գործունեության բարձր արդյունավետությունը սպորտային գործունեության իրականացման ընթացքում: Վերը նշված թեզը արդիական է, քանի որ ինչպես մարզիկը կոդրստորի իր ֆիզիկական, տեխնիկատակտիկական պատրաստվածության մակարդակը մրցման ընթացքում, պայմանավորված է թե ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվում նա այդ պահին՝ մի դեպքում առկա վիճակը կարող է նպաստել, մյուս դեպքում խանգարել այդ գործունեության արդյունավետ իրականացմանը: Հարկ է նշել, որ մարզիկի հոգեբանական վիճակը մեծ նշանակություն ունի բարձ ֆունկցիոնալ մակարդակ ապահովելու համար, որը հնարավորություն կտա նրան լիարժեք կիրառել իր ֆիզիկական, տեխնիկատակտիկական պատրաստվածության մակարդակը սպորտային բարձր արդյունքի հասնելու համար: Երբ մարզիկը գտնվում է հոգեկան պատրաստականության վիճակում, մրցման մթնոլորտը նպաստում է ընդհանուր մոբիլիզացիային և ռեսուրսային հնարավորությունների ակտիվացմանը (օրինակ՝ աղբյուրներով կոտորույց հորմոնալ համակարգի ակտիվացումը և մակերիկամային

հորմոնի աստիճանի բարձրացումը), որի արդյունքում նա ցուցաբերում է պայքար վարքագծային համակարգի օպտիմալ աշխատանքը, երբ նույնիսկ գերազանցում է իր մարզումների ընթացքում գրանցած արդյունքները, մյուս դեպքում այդ գործոնները բացասական հոգեվիճակի պատճառ են հանդիսանում, երբ ակտիվանում է վախի վարքագծային համակարգը՝ որը կազմալուծում է նրա ֆիզիկական, տեխնիկատակտիկական պատրաստվածության մակարդակը:

Մարզիկի հոգեբանական պատրաստության գործընթացը պետք է այնպես իրականացվի, որպեսզի նրա մոտ մրցման ընթացքում գերակշռի «միայն պայքար» վարքագծային համակարգը, որը համապատասխանում է հոգեկան պատրաստականության վիճակին: Անբարենպաստ հոգեբանական վիճակների առաջացման նախապայմաններից է անձնային տազնապայնության բարձր մակարդակը, որը որպես մարզիկի անհատական առանձնահատկություն, կարևոր նշանակություն ունի սպորտային գործունեության արդյունավետ իրականացման համար: Անձնային տազնապայնության բարձր մակարդակը մրցման ընթացքում հաճախ արգելք է հանդիսանում մարզիկների համար, նպաստելով նրանց մոտ համապատասխան հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների բացասական տեղաշարժերի, որն էլ խանգարում է նրանց ֆիզիկական, տեխնիկատակտիկական հնարավորությունների լիարժեք դրսևորմանը: Այդ դեպքերում նրանց մոտ առաջանում է ավելորդ անհանգստություն, ինքնավստահության մակարդակի նվազում, ինչպես նաև մկանային լարվածության աճ, սրտի զարկերի հաճախացում, մակերեսային շնչառություն, ոտքերի թուլություն և այլն: Այս ամենը խանգարում է մարզման և մրցակցային գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը, խոչընդոտելով բարենպաստ ֆունկցիոնալ վիճակի և հոգեբանական աշխատու-

նակության բարձր մակարդակի պահպանմանը: Սակայն էթե անհատն ունի կամային ինքնավերահսկման բարձր մակարդակ, ապա նա կարող է գիտակցաբար, գործադրելով կամքի ուժ և կամային ճիգեր հաղթահարել առաջացած անբարենպաստ հոգեվիճակները:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել բոնցքամարտիկների անձնային տազնապայնության մակարդակն ու նրա համահարաբերակցական կապերը կամային ինքնավերահսկման հետ:

Մեթոդները: Դիտում, հարցազրույց, թեստավորում, արդյունքների մաթեմատիկական վիճակագրություն:

Ուսումնասիրությունն անկացրել ենք Աբովյանում, Երևանում և Ծաղկաձորում՝ ուսումնամարզական հավաքների, որին մասնակցել են բոնցքամարտի երիտասարդների և մեծահասակների Հայաստանի ազգային հավաքականների 40 բարձրակարգ մարզիկներ: Թեստավորումը կատարվել է՝ Ա.Վ. Զվերկովի և Ե.Վ. Էյդմանի «Կամային ինքնավերահսկման ախտորոշում», Ե.Ա. Կալինինի «Սպորտային գործունեության դրդապատճառները», Չ.Դ. Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի «Տազնապի գնահատման» մեթոդներով:

Արդյունքները: ՀՀ բոնցքամարտի մեծահասակների հավաքականում անձնային տազնապայնության միջին մակարդակ ունեն 20 մարզիկներից 17 հոգի, երեք հոգի՝ ցածր, բարձր՝ ոչ ոք: Այն մարզիկների մոտ, որոնք միջազգային սպորտի վարպետներ են անձնային տազնապայնության մակարդակը միջին է, միայն 1 հոգու մոտ գրանցվել է անձնային տազնապայնության ցածր մակարդակ: Երիտասարդների հավաքականում անձնային տազնապայնության բարձր մակարդակ ունեն 20 մարզիկներից երեք հոգի, միջին՝ 17, ցածր՝ ոչ ոք: Հետազոտության արդյունքում ստացանք հետևյալ համահարաբերակցական կապերը՝

Բոնքամարտիկների անձնային տազնապայնության մակարդակի ու կամային ինքնավերահսկման համահարաբերակցական կապերի արժեքները
 $P \leq 0.01-0.05$ $N=40$

Անձնային տազնապ և կամք	R= -0.36796
Անձնային տազնապ և համառություն	R= -0.31281
Անձնային տազնապ և ինքնատիրապետում	R= -0.2942
Անձնային տազնապ և սպորտային կարգ	R= -0.393
Անձնային տազնապ և տարիք	R= -0.325
Անձնային տազնապ և շփման պահանջմունք	R= 0.376
Անձնային տազնապ և խրախուսանքի պահանջմունք	R= 0.28
Անձնային տազնապ և շփման պահանջմունք	R= 0.376

Վերլուծելով հետազոտության արդյունքները, բացահայտեցինք, որ կան բացասական համահարաբերակցական կապեր անձնային տազնապի և կամային ինքնավերահսկման, համառության և ինքնատիրապետման միջև: Որքան բարձր է կամային ինքնավերահսկման մակարդակը, այնքան ցածր է անձնային տազնապայնությունը: Ինչպես նաև դրական համահարաբերակցական կապեր կան բրնցքամարտիկների տարիքի, սպորտային փորձի և անձնային տազնապայնության միջև: Բացասական համահարաբերակցական կապեր կան նաև անձնային տազնապի և սպորտային կարգի միջև (միջազգային սպորտի վարպետ, սպորտի վարպետ և առաջին կարգի մարզիկներ): Որքան բարձր է մարզիկի սպորտային կարգը, այնքան ցածր է նրա մոտ անձնային տազնապայնության մակարդակը:

Կան նաև համահարաբերակցական կապեր սպորտային գործունեության դրդապատճառների և անձնային տազնապայնության միջև: Որքան բարձր է անձնային տազնապայ-

նության մակարդակը, այնքան մեծ է խրախուսանքի, շփման պահանջմունքները սպորտային գործունեության իրակա-նացման ընթացքում:

Եզրակացություն: Ամփոփելով վերոհիշյալ արդյունքները՝ կարելի է նշել, որ անձնային բարձր տազնապայնությունը, որպես մարզիկի անհատական առանձնահատկություն, լինելով համահարաբերակցական կապի մեջ կամային ինքնավերահսկման մակարդակի հետ, խոչընդոտում է մարզիկի ֆիզիկական, տեխնիկատակտիկական հնարավորությունների լիարժեք դրսևորմանը: Հետևաբար տազնապայնության անբարենպաստ մակարդակի հաղթահարման համար հարկավոր է իրականացնել հատուկ միջոցառումներ, ուղղված կամային ինքնավերահսկման, հուզականային ինքնականոնավորման հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը, որոնք հնարավորություն կտան մարզիկին մասնակցել մրցումներին հոգեբանական այնպիսի վիճակում, որը կնպաստի լիարժեք դրսևորելու իր ֆիզիկական և տեխնիկատակտիկական պատրաստականության բարձր մակարդակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ильин. Е. П. Психология спорта.-СПБ.: Питер, 2009.
2. Пуни А.Ц. К психологической характеристике предстартового состояния спортсмена // Теория и практика физической культуры. – 1949. - №7. – С. 519-526.
3. Большая энциклопедия психологических тестов.-М.:Эксмо, 2009.-416 с.
4. Gray J.A., McNaughton N. The Neuropsychology of anxiety: an enquiry into the functions of the septo-hippocampal system (2nd edition). Oxford University Press, 2000.
5. <http://psylist.net/praktikum/00417.htm>

**ԸՍԲԻՇԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀՈԳԵՇԱՐԺԻՉ
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ՑՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳԵՂԱՍՅԱՆ Վ. Ղ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ**

Ամփոփագիր: Հոդվածում ներկայացված է տարբեր որակավորում ունեցող ըմբիշների հոգեշարժիչ ընդունակությունների և հոգեբանական պատրաստության առաջատար ցուցանիշների հետազոտության արդյունքները: Բացահայտվել և հիմնավորվել են նրանց համահարաբերակցական կապերը:

***Առանցքային բառեր:** Համահարաբերակցական կապեր, հոգեշարժիչ ընդունակություններ, շարժողական ռեակցիա, մոբիլիզացիոն պատրաստություն, տեխնիկատակտիկական պատրաստականություն:*

**ПРОЯВЛЕНИЯ ОСОБЕННОСТЕЙ ПСИХОМОТОРНЫХ
СПОСОБНОСТЕЙ БОРЦОВ ОБЕСПЕЧИВАЮЩИХ
ЭФФЕКТИВНОСТИ СОРЕВНОВАТЕЛЬНОЙ
ДЕЯТЕЛЬНОСТИ
ГЕГАМЯН В. К.
ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В статье представлены результаты исследования психомоторных способностей и ведущие показатели состояния психической готовности борцов различных квалификаций. Выявлены и обоснованы их корреляционные достоверные связи.

***Ключевые слова.** Корреляционные связи, психомоторные способности, двигательная реакция, мобилизационная подготовка, техническая готовность.*

**THE FEATURES OF EXCELLENCE OF PUBLISHING
 ADMINISTRATION PROVIDING EFFICIENCY OF WRESTLING
 COMPETITIVE ACTIVITY
 GEGHAMYAN V. GH.
 ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND
 SPORT YEREVAN, ARMENIA**

Abstract. The article presents the results of the study of psychomotor abilities and the leading pokazatel'i state of mental preparedness of wrestlers of various qualifications. Their correlated and reliable connections were revealed and grounded.

Key words. *Corelational connections, psychomotor trajectories, motor reaction, mobilization preparation, technical gothicity.*

Արդիականությունը: Հոգեշարժիչ ընդունակությունների ուսումնասիրությունները տարբեր հեղինակների կողմից վկայում են, որ մարզիկի սպորտային պատրաստության համակարգում, այդ թվում՝ նաև ըմբշամարտում, էական դեր են կատարում և կազմում են մարզիկի հզեկան պատրաստականության բարենպաստ վիճակի ձևավորման կենտրոնական հենքը [1, 3 և ուրիշներ]:

Ըմբշի մրցակցային գործունեությունը, ընթանալով անմիջական ֆիզիկական կոշտ շփման, ժամանակի դեֆիցիտի, իրավիճակների կտրուկ փոփոխվող և լարված մկանային պայքարի պայմաններում, մարզիկից պահանջում է առավելազույն մոբիլիզացիոն պատրաստություն, շարժողական ռեակցիայի, մկանաշարժողական զգայությունների, ինչպես նաև՝ «մասնագիտացված ըմբռնումների» զարգացվածության բարձր մակարդակ:

Արդի ըմբշամարտում ուսումնասիրված հոգեշարժիչ ցուցանիշների նորովի դրսևորումներն ու նշանակությունը առավել են կարևորվում, ինչը նախկինում չի արտահայտվել ու հիմնավորվել ըմբշի պատրաստականության ոլորտում: Այս ամենը խնդիր է առաջադրում ուսումնասիրելու ըմբշի պատրաստականության ձևերի զարգացումն ու կատարե-

լագործումը, որոնք իրականանում են հոգեշարժիչ ցուցանիշների փոխկապակցված դրսևորումների օրինաչափություններով՝ որպես նրանց հոգեկան պատրաստականության վիճակի մոդելային բնութագրեր [1]:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ըմբիշի մրցակցային գործունեությունն ապահովող հոգեշարժիչ ընդունակությունների առավել առաջնային ցուցանիշներն ու փոխադարձ կապերը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտություններն իրականացվել են դիտումների, թեստերի, լաբորատոր գործիքային հետազոտության, մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ հետազոտվել են ազատ և հունահռոմեական ոճի 63 ըմբիշներ, որոնցից 33-ը ՀՀ ազգային հավաքականի բարձր որակավորման ըմբիշներ են: 30-ը ունեն ցածր որակավորում: Երկու խմբերում ընդգրկված ըմբիշների միջին մարզական ստաժը կազմում է 10-13 տարի:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Բարձր որակավորման ըմբիշների հոգեշարժիչ ընդունակությունների և հոգեկան պատրաստականության վիճակի հետազոտված մյուս ցուցանիշների համահարաբերակցական կապերի վերլուծության արդյունքում պարզվում է, որ առօրյա սովորական մարզումային գործողություններում դրսևորվող սխալ ռեակցիաների քանակն ու ժամանակը անմիջական հավաստի համահարաբերակցական կապեր են դրսևորել կայունության-արգելադիմացկունության ցուցանիշների հետ ($r = +0,48$, $r = +0,45$): Այս փաստը մեկնաբանվում է հետևյալ կերպ. հաճախ ըմբշամարտի մարզումային գործընթացում մարզիկին ներկայացվում են տարբեր, բայց ոչ առավելագույն բարդության շարժողական գործողությունների իրականացում, և այդ տևական, հաճախակի կրկնվող շարժողական գործողությունների արագ ու ճիշտ իրականացումը պահանջում է առօրյա

սովորական մարզումային պայմաններում իրականացվող շարժողական ռեակցիայի արդյունավետ դրսևորում, որի հիմքում ընկած են արգելքների հանդեպ բարձր դիմացկունությունը և կայունությունը, ինչի մասին են վկայում նաև վերը ներկայացված համահարաբերակցական կապերի դրսևորումները:

Սակայն, իրավիճակների բարդացման հետ մեկտեղ, բարձր որակավորման ըմբիշների հոգեշարժիչ ցուցանիշների համահարաբերակցական կապերը փոփոխության են ենթարկվում, և արտակարգ լարվածության պայմաններում դրսևորվող շարժողական ռեակցիաները, որոնք համապատասխանում են ըմբիշի մրցակցային գործընթացում կատարվող բարդ շարժողական գործողություններին, համահարաբերակցվում են դրդապատճառների էներգետիկ ոլորտի ($r = -0,47$) և նախամեկնարկային մարտական պատրաստականության վիճակի ցուցանիշների հետ ($r = -0,40$): Ուստի, ենթադրվում է, որ բարձր որակավորման ըմբիշների դրդապատճառների էներգետիկ ոլորտի ակտիվության և նախամեկնարկային հոգեկան վիճակների բարենպաստ մակարդակի ապահովման գործընթացի կազմակերպումը կարող են նպաստել, որ ըմբիշիները գոտեմարտի ընթացքում ժամանակի դեֆիցիտի պայմաններում արագ կողմնորոշվեն և հնարավորինս առանց սխալներ թույլ տալու՝ իրականացնեն տեխնիկատակտիկական արդյունավետ գործողություններ ու հնարքներ:

Շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիան համահարաբերակցական կապ է դրսևորել մրցակցային հուզական դիմացկունության ($r = +0,53$), ներքին իմաստավորվածության սթրեստորների ($r = -0,40$), հուզական կայունության ($r = -0,43$) և նախամեկնարկային տենդի ($r = -0,43$) ցուցանիշների հետ: Պարզ շարժողական ռեակցիան համահարաբերակցվել է հուզական

կայունության ($r = +0,39$), իսկ առավելագույն մոբիլիզացիան՝ մրցակցային հուզական դիմացկունության ($r = -0,46$) և հուզական կայունության ($r = -0,41$) ցուցանիշների հետ: Հետաքրքրականն այն է, որ հետազոտված ցուցանիշներից շատերը նախկինում հեղինակների կողմից չեն կարևորվել ըմբիշի հոգեշարժիչ ընդունակությունների շարքում, սակայն հետազոտության արդյունքների համահարաբերակցական կապերի վերլուծություններից և մեր կողմից կատարված դիտարկումներից պարզ է դառնում, որ վերը նշված ցուցանիշները, այդ թվում և շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիան ու պարզ շարժողական ռեակցիան, առավել էական նշանակություն են ստանում տեխնիկատակտիկական պատրաստականության գործում և կորոշ են հանդիսանալ ըմբիշի մրցակցային գործունեության արդյունավետության հիմնական երաշխիքներ, ինչպես նաև հոգեկան պատրաստականության վիճակի գնահատման մոդելային բնութագրեր:

Ցածր որակավորման ըմբիշների հոգեշարժիչ ընդունակությունների համահարաբերակցական կապերն արտացոլում են այլ պատկեր: Այստեղ, ի տարբերություն բարձր որակավորում ունեցող ըմբիշների, գրեթե բոլոր հոգեշարժիչ ընդունակությունները համահարաբերակցվել են հետազոտված հոգեկան պատրաստականության վիճակի մյուս ցուցանիշների հետ:

Կարևորվում է նաև ներկայացված հոգեշարժիչ ընդունակությունների համահարաբերակցական կապերի համեմատումը բարձր և ցածր որակավորման ըմբիշների ցուցանիշների միջև, ինչը մեզ թույլ տվեց այդ համեմատության արդյունքների հիման վրա բացահայտել, որ, բացի բարձր և ցածր որակավորման ըմբիշների հոգեշարժիչ ոլորտում առկա տարբերությունների, ակնառու են հավաստի համահարաբերակցական տեղաշարժեր՝ կապված մրցակցային հոգեկան

հուսալիության, հոգեկան վիճակների, անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների ու մասնագիտական մի շարք յուրահատկությունների հետ, որոնք կազմում են ըմբիշի հոգեբանական պատրաստությանը ներկայացվող խնդիրների հիմնական բովանդակությունը:

Եզրակացություններ: Ցածր որակավորման ըմբիշների մրցակցային գործունեության արդյունավետությունը, ի տարբերություն բարձր որակավորման ըմբիշների, մեծամասամբ պայմանավորված է հոգեշարժիչ ընդունակություններով, որոնք ավելի անկայուն են, հաճախ կարող են փոփոխվել արտաքին և ներքին ազդակների ներքո և անմիջականորեն կախված են հոգեկան տարբեր երևույթներից (արտաքին և ներքին սթրես գործոններ, նախամեկնարկային հոգեկան վիճակներ, անձնային, իրավիճակային տազնապ, հուզական կայունություն, անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններ և այլն):

Չնայած նույն ազդակները կան նաև բարձր որակավորման ըմբիշների մրցակցային գործընթացում՝ սակայն նրանց մոտ առկա են հուզակամային կառավարման մեխանիզմների դրսևորումներ, որոնք ապահովում են բարձր մրցակցային արդյունքների կայուն մակարդակներ:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բարսյան Հ. Ա.**, Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում. Ուս. ձեռնարկ, - Եր., 2007, - 121 էջ

2. **Գեղամյան Վ. Ղ.**, Հոգեշարժիչ ֆունկցիաների դերը ըմբիշի տեխնիկատակտիկական պատրաստության համակարգում: Հանրապետական XXXVII գիտ. կոնֆ. նյութեր: Երևան, 2010, էջ 69-72

3. **Воробьев В. А.**, Комплексная диагностика психофизиологических функций борцов как ведущий фактор управления тренировочным процессом. Тез. Первого между. науч. конгресса «Нейробиотелеком-2004». - СПб.: Политехника, 2004. - с. 58

**ԱՐԱԳԱՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ
ԺԱՄԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**

ՄԱՄԱԶԱՆՅԱՆ Վ. Մ., ԲԱԲԱՅԱՆ Կ. Ա.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Հոդվածում փորձ է արվում վերլուծել էլիտար արագավազորդների մեկնարկային ռեակցիայի ժամանակի և մարզական արդյունքի կապը նրանց հոգեբանական պատրաստվածության հետ:

Առանցքային բառեր: էլիտար, արագավազք, մեկնարկ, ժամանակ, հոգեբանական վիճակ, առաջնություն, եզրափակիչ:

**ВРЕМЯ СТАРТОВОЙ РЕАКЦИИ СПРИНТЕРА КАК РЕЗУЛЬТАТ
ПРОЯВЛЕНИЯ ПСИХИЧЕСКИХ ФУНКЦИЙ
МАМАДЖАНЫЯН В. М., БАБАЯН К. А.
ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
И СПОРТА АРМЕНИИ, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Анотация. В статье делается попытка выявить связь между спортивным результатом и временной реакцией во время старта у элитарных бегунов с учетом их психологической подготовки:

Ключевые слова. Элитный, спринтер, старт, время, психология, состояние, первенство, финал.

**THE TIME OF SPRINTER'S START RESPONSE AS A RESULT OF
MANIFESTATION OF MENTAL
MAMAJANYAN V. M., BABAYAN K. A.
ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND
SPORT, YEREVAN, ARMENIA**

Abstract. The connection of time and sports result of elite sprinters start reaction depend on this psychological preparedness has been analyzed in this article.

Keywords. *Elite, sprinter, start, time, psychologcab, condition, competition, final.*

Արդիականությունը: Ժամանակակից սպորտում, առավելապես արզելավագրում, աթլետի ցույց տված արդյունքը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ նաև հոգեբանական պատրաստությամբ:

Ժամանակակից գիտամեթոդական գրականության մեջ քիչ է ուշադրություն դարձվում ցածր մեկնարկում մեկնարկային հակազդման ժամանակի վրա: Հաշվի առնելով, որ աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում հաղթողը շատ դեպքում որոշվում է հարյուրերորդական վայրկյանների (վրկ.) տարբերությամբ, ուստի այն անտեսել չի կարելի: Մյուս կողմից մրցումների կանոնների համաձայն 0,100վրկ-ից արագ կաղապարներից պոկվելը համարվում է կեղծ մեկնարկ, ինչը լուրջ հոգեբանական խնդիր է արագավազորդի համար: Կեղծ մեկնարկից չի խուսափել նույնիսկ Ու.Բոլթը, որը 2013թ. աշխարհի առաջնության եզրափակչում որակազրկվեց:

Ըստ Վ.Բ.Առաքելյանի և Ֆ.Գ.Ղազարյանի (2008) արագաշարժության համար բնորոշ է ազդանշանի հանդեպ ռեակցիան: Արագավազում դա մեկնարկային ազդանշանն է, որը դասվում է պարզ ռեակցիայի շարքին և որը հնարավոր է մշակել:

Ե.Դ.Գագուան (2002) գտնում է, որ մեկնարկի ժամանակը՝ կրակոցից հետո առջևի կաղապարից պոկման պահը, էլիտար արագավազորդների մոտ հասնում է 0,35-0,38վրկ. և այն կազմում է ամբողջ արդյունքի 4%: Մրցատարածության մեծացման հետ հակազդման մեկնարկային ժամանակի նշանակությունը փոքրանում է, որի հետևանքով 200 և 400մ վազքա-

տարածություններում կեղծ մեկնարկի հավանականությունը փոքրանում է:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել և հիմնավորել էլիտար արագավազորդների մեկնարկային հակազդման ժամանակի և հոգեբանական պատրաստության կապը:

Խնդիրը: Վերլուծել 2017թ. աշխարհի առաջնությունում արագավազքի լավագույն քառյակի ցույց տված արդյունքի կապը նրանց հոգեկան ֆունկցիաների հետ:

Մեթոդները: 1. Գրանցվել է արագավազորդների արդյունքը և մեկնարկային ռեակցիայի ժամանակը վազքահերթում, կիսաեզրափակիչում և եզրափակիչում: 2. Տեսանյութի բազմակի դիտումների միջոցով վերլուծվել է նրանց պահվածքը եզրափակիչից առաջ:

Հետազոտության արդյունքները: 2017թ. աթլետիկայի աշխարհի առաջնությունում Ու.Բոլթի վերջին մասնակցությունն էր, որը մեծ հետաքրքրություն էր առաջացրել միլիոնավոր երկրպագուների մոտ: Քանի որ մրցումը՝ առավել ևս արագավազքի եզրափակիչը, իր բնույթով բարդ հոգեբանական գործընթաց է, որում չի կարող մանրուք լինել, լրացուցիչ ճնշում է գործադրում եզրափակիչի մասնակիցների վրա:

Աղյուսակում տրված է չորս լավագույն արագավազորդների երկիրը, ծննդյան թիվը, անձնական ռեկորդը և դրա սահմանման տարին, վազքահերթում, կիսաեզրափակիչում և եզրափակիչում ցույց տված 100մ արդյունքը, մեկնարկային հակազդման ժամանակը և գրաված տեղը: Բոլոր չորս արագավազորդները՝ բացառությամբ Ք.Քոլեմանի, իրենց մարզական կարիերայի ընթացքում բազմաթիվ անգամ հանդիպել են տարբեր մակարդակի մրցումներում և միմյանց լավ ճանաչում էին: Կիսաեզրափակիչում և եզրափակիչում ցույց տված արդյունքների տարբերությունն այնքան էլ մեծ չէ: Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ք.Քոլեմանի մեկնարկային

ռեակցիայի ժամանակը հավասար էր 0,123վրկ, որով նա առաջ անցավ Յու.Բլեյքից՝ 0,015, Ջ.Գաթլինից 0,016 և Ու.Բոլթից 0,060 վայրկյանով: Ու.Բոլթը տապալեց մեկնարկը, որի պատճառը վատ մարզավիճակն էր և մեկնարկում կոնցենտրացիայի պակասը: Ք.Քոլեմանի պարտությունը Ջ.Գաթլինին կարելի է բացատրել փորձի և հոգեբանական պատրաստության պակասով: Նա հավատարմով իր հաղթանակին վազքատարածության վերջնամասում չափից ավելի լարվել էր: Եթե Ջ.Գաթլինի հաղթանակը կարելի է օրինաչափ համարել, ապա Ք.Քոլեմանի և Ու.Բոլթի պարտվելու հիմնական պատճառը, կարծում ենք, վատ մեկնարկն էր:

Աղյուսակ

Էլիտար արագավազորդների մրցակցային արդյունքները պայմանավորող գործոնները

	Ազգանուն, անուն	Երկիրը	Անձնական ռեկորդը, տարին	Մրցումների փուլերը	Աղյուսակները (վրկ)	Մեկնարկային չափազանց ժամանակ(վրկ)	Տարր
1	Գաթլին Ջասթին	ԱՄՆ 1982	9,74 (2015) 19,57(2015)	վազքահերթ	10,05	0,149	1
				կիսաեզրափ.	10,09	0,152	2
				եզրափակիչ	9,92 SB	0,138	1
2	Քոլեման Քրիստիան	ԱՄՆ 1996	9,82 (2017) 19,85	վազքահերթ	10,01	0,196	1
				կիսաեզրափ.	9,97	0,141	1
				եզրափակիչ	9,94	0,123	2
3	Բոլթ Ուսեյն	ՀԱՄ 1986	9,58(2009)WR 19,19(2009)WR	վազքահերթ	10,07	0,166	1
				կիսաեզրափ.	9,98	0,166	2
				եզրափակիչ	9,95 SB	0,183	3
4	Բլեյք Յոհան	ՀԱՄ 1989	9,69 (2012) 19,26 (2011)	վազքահերթ	10,13	0,148	2
				կիսաեզրափ.	10,04	0,139	1
				եզրափակիչ	9,99	0,137	4

Ծանոթություն: ԱՄՆ – Ամերիկայի միացյալ նահանգներ,
 ՀԱՄ – Ճամայկա,
 SB–մրցաշրջանի լավագույն արդյունք, WR–աշխարհի ռեկորդ:

Եթե Ու.Բոլթը ցույց տար կիսաեզրափակիչի մեկնարկային ռեակցիայի ժամանակը (0,166վրկ.) կհաղթեր Ք.Քոլեմանին: Որոշ տվյալներով Ու.Բոլթը ցանկացել էր իր մրցելույթներն ավարտել 2016թ. օլիմպիական խաղերից հետո, սակայն ինչ-ինչ պատճառներով նա որոշել էր իր մրցելույթներն ավարտել Լոնդոնում: Նրա այդ որոշումն մարզական տեսակետից իրեն չարդարացրեց, քանի որ չկարողացավ լավ մարզավիճակ ձեռք բերել և ոչ էլ հոգեբանորեն պատրաստվել մրցումներին:

Եզրակացություններ: 1. Վերլուծելով ստացված արդյունքները պետք է նշել, որ Ու.Բոլթը ֆիզիկապես և հոգեպես պատրաստ չէր Լոնդոնում կայացած աշխարհի առաջնությա- նը: 2. Եզրափակիչում Ու.Բոլթի մեկնարկային ռեակցիայի ժամանակը (0,183վրկ.) վատագույններից էր նրա մարզական կարիերայում, որը գտնում ենք հոգեբանական վատ պատրաստության արդյունք էր (մեկնարկում կոնցետրացիայի կորուստով):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Վ.Բ., Ղազարյան, Ֆ.Գ. Մարզիկների կոնդիցիոն ընդունակությունների մշակման հիմունքները, - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008. – 81 էջ
2. Гагя Е.Д. Тренировка спринтера – М.: Олимпия Пресс, Терра-Спорт, 2001. – 72с (Библиотека легкоатлета)
3. www.IAAF.com 100 meter Result Word-Championshtps London 2017

**ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՄԱՐԶԻՎՆԵՐԻ ՀՈԳԵՀԻԳԻԵՆԱՅԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԿՐՏՄԻՍՅԱՆ Մ. Պ., ՄԿՐՏՄԻՍՅԱՆ Լ. ՅՈՒ.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Հոդվածը վերաբերում է բարձրակարգ մարզիկների հոգեկան առողջության խնդիրներին: Վերլուծվում են մրցումների եւ հոգեկանոնավորման գործընթացում մարզիկների մարմնում ֆունկցիոնալ փոփոխությունների հոգեբանական մեխանիզմները: Քննարկվում են բարձրակարգ մարզիկների հոգեկան առողջությունն ապահովող հոգեախտորոշման եւ հոգեկանոնավորման գործընթացների կազմակերպման օպտիմալ եղանակներն ու միջոցները:

***Առանցքային բառեր.** հոգեկան առողջություն, գործառնական վիճակներ, հնարավորություններ, հուզական ոլորտ, հոգեախտորոշում, հոգեկարգավորում:*

**ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОБЕСПЕЧЕНИЯ
ПСИХОГИГИЕНЫ ВЫСОКОКВАЛИФИЦИРОВАННЫХ
СПОРТСМЕНОВ**

**МКРТУМЯН М.П., МКРТУМЯН Л.Ю.,
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМ. Х. АБОВЯНА, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В статье рассматриваются проблемы обеспечения психического здоровья высококвалифицированных спортсменов. Анализируются психологические механизмы функциональных изменений организма у спортсменов в ходе соревнований и в процессе психорегуляции. Обсуждаются оптимальные пути и средства организации психодиагностических и психорегулирующих процессов, обеспечивающих психическое здоровье спортсменов в спорте высших достижений.

Ключевые слова: психическое здоровье, функциональные состояния, возможности, психическая сфера, психодиагностика, психорегуляция.

PSYCHOLOGICAL PECULIARITIES OF PROVIDING THE PSYCHOHYGIENE OF HIGHLY-QUALIFIED SPORTSMEN

MKRTUMYAN M. P., MKRTUMYAN L. Y.
ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KH. ABOVYAN, YEREVAN, ARMENIA

Abstract. The article discusses the problems of ensuring the mental health of highly-qualified sportsmen. It analyzes the psychological mechanisms of functional changes in the body of athletes during the competitions and psychoregulation process. It discusses the optimal ways and remedies of organization of psychodiagnostic and psychoregulation processes which ensure the mental health of highly-qualified sportsmen.

Keywords: mental health, functional conditions, capabilities, the psychic sphere, psychodiagnostics, psychoregulation.

Արդիականությունը: Բարձրագույն նվաճումների ժամանակակից սպորտը աչքի է ընկնում իր դիտարժանությամբ, մրցակցական սուր պայքարի, դրամատիզմի հագեցվածությամբ: Ծանրաբեռնված մարզումների ու մրցակցական սուր պայքարի ընթացքում էներգետիկ մեծ ծախսերի, տարբեր պատճառներով դրանց չվերականգնվելու դեպքում մարզիկների օրգանիզմում առաջանում են վնասվածքներ, հյուժման երևույթներ [1, էջ 151]: Ուստի, ընդհանուր և հոգեկան առողջության հոգեհիգիենայի հիմնախնդիրը խիստ արդիական է բնագավառի գիտնականների ու մարզիչների համար:

Աշխատանքի նպատակը: Բարձրակարգ մարզիկների ընդհանուր և հոգեկան առողջության ապահովման հոգեբանական արդյունավետ համակարգի առաջադրումը:

Աշխատանքի խնդիրները: Նպատակի իրականացման համար առաջադրվել են կազմակերպչական մի շարք խնդիրներ:

ա) մարզիկների հուզական վիճակների, գործառնական հնարավորությունների հոգեախտորոշման մարտկոցի ստեղծում,

բ) կոգնիտիվ համակարգի տեղաշարժերի վերահսկման մեթոդների ընտրություն,

գ) հոգեմկանային մարզման վերականգնող, ուղեկցող համալիրի ստեղծում [4, էջ 11]:

Բարձրակարգ մարզիկների հոգեկան առողջության գնահատականները տրվում են նրանց օրգանիզմի գործառնական հնարավորությունների հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների հիման վրա: Լ.Պ. Գրիմակի բնութագրմամբ՝ «մարզիկների հոգեկան առողջության, նրանց գործառնական հնարավորությունների անկման ցուցանիշներից մեկը բարձր մակարդակի շարունակական սթրեսի, հոգնածության, հիասթափության արտահայտվածությունն է» [3, էջ 54]: Դրանցում կենտրոնական տեղ են զբաղեցնում մարզիկների հուզական ոլորտի փոփոխությունները: Բարձրակարգ մարզիկների հոգեկան առողջության ապահովման ուղեկցող աշխատանքները անհրաժեշտ ենք համարել կառուցել հետևյալ պահանջների շրջանակներում.

1. Մարզաձևի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառում,

2. Մարզիկների անհատական հոգեբանական, ֆիզիկական, տարիքային, սեռային առանձնահատկությունների հաշվառում,

3. Մարզիկների հոգեկան հյուծվածության, օրգանիզմի գործառնական հնարավորությունների փոփոխության յուրահատկությունների հաշվառում,

4. Մարզումային ու մրցումային փուլերում դիտարկվող հոգեճանաչողական փոփոխությունների հիման վրա անհատական անկետաների, ստեղծում,

5. Կանխարգելիչ, վերականգնողական աշխատանքների կազմակերպում:

Աշխատանքների իրականացման հիմքում դրվում են հույզերի յուրահատուկ փոփոխությունների ցուցանիշները: Դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ

1. հուզական վիճակները զուգակցում են հոգեկան բոլոր երևույթներին: Դրանց բնութագրերի փոփոխությունները միջնորդավորված տեղեկություններ են տալիս մարզիկների հոգեկան ոլորտի վերաբերյալ [3, էջ 54],

2. հոգեմկանային մարզման միջոցների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում անհրաժեշտ փոփոխություններ առաջացնել մարզիկների հոգեմարմնական ցանկացած համակարգում:

Համակարգերի փոխադարձ Ֆունկցիոնալ կապվածությունը, ըստ Ա.Պ. Անոխինի ֆունկցիոնալ տեսության, «համակարգի շրջանակներում ազդելով որևէ ենթահամակարգի վրա միջնորդավորված կերպով ազդում ենք նաև ամբողջ համակարգի վրա»: Կարծում ենք, որ ճանաչելով դրանց փոփոխության մեխանիզմները՝ արդյունքում կարող ենք ապահովել սպասվելիք անհրաժեշտ փոփոխությունը [2, էջ 73]: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու կանխարգելիչ և վերականգնողական աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկելու անձի խորքային կառույցների ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխության տեղաշարժերը:

Ա.Ռ. Լուրիան առանձնացնում է հոգեկան երևույթների ծագման համար հենք հանդիսացող երեք հիմնական բլոկ-համակարգեր: 1-ը անձի արթմնի վիճակի պահպանման բլոկն է, 2-ը՝ օրգանիզմի ընդհանուր տոնուսի և արտաքին միջավայրի հետ ակտիվ կապի բլոկը, 3-ը՝ հոգեկան գործունեության ծրագրավորման, կարգավորման և վերահսկման բլոկը [5, էջ՝ 214]: Այդ բլոկ-համակարգերի ակտիվ գործունեությունը

նր պայմանավորված է անձի օրգանիզմի ընդհանուր օպտիմալ տոնուսի ապահովման կարողունակությամբ: Այս տեսանկյունից՝ մարզիկների քրոնիկ բնույթ կրող ծանրաբեռնվածությունն ու գերհոգնածությունը պատճառ են հանդիսանում վնասվածքների և ժամանակի ընթացքում մարզաձևին բնորոշ վտանգավոր փոփոխությունների, երբեմն նաև հիվանդությունների առաջացման համար:

Մասնագիտական գրականության վերլուծություններն ու փորձը ցույց են տալիս, որ մարզիկների հոգեկան առողջության տատանումները զուգակցվում են յուրահատուկ բացասական հույզերի դրսևորմամբ [1, 3, 4]: Այս կապակցությամբ, հոգեդիագնոստիկ և հոգեկարգավորման ներգործությունների համակարգերի հմուտ կիրառումը հիմք է հանդիսանում մարզիկների հոգեկան առողջության կանխարգելիչ, վերականգնողական աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Որպես վերականգնողական հոգեբանական միջոցներ՝ նպատակահարմար է հոգեմկանային և աուտոգեն մարզման համակարգերի նախընտրությունը, քանզի դրանք ուղղված են կարգավորելու ինչպես օրգանական, կենսաբանական, այնպես էլ հոգեկան ոլորտի գործառութային վիճակներն ու հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մկրտումյան Մ. Պ. Արտակարգ իրավիճակների հոգեբանություն: Փրկակարների հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաներ, Զանգակ, Երևան, 2013թ., 248 էջ:
2. Анохин П. К. Очерки по физиологии функциональных систем. М., Медицина, 1975, 447с.
3. Гримак Л. П. Общение с собой. М.: Политиздат, 1991, 320с.
4. Куликов Л. В. Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики: Учебное пособие. –СПб.: Питер, 2004., 464с.
5. Лурия А. Р. Высшие корковые функции человека. М.: изд-во Моск. Ун-та, 1969. -432с.

**ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԿՈՂՄԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ
ՄԱՐԶՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ**

ՆԻԿՈՅԱՆ Մ.Է.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Ժամանակակից ֆուտբոլի զարգացման միտումները՝ խաղային գործողությունների անընդհատ լարվածության մեծացումը, կտրուկ սրում է մրցակցությունը մրցանակային տեղերի համար: Մարզական արդյունքների բուռն աճը մեծ պահանջներ է ներկայացնում ոչ միայն մարզիկի ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական, այլ նաև նրա հոգեբանական պատրաստության համակարգի վրա: Մարզական նվաճումների և պատանի ֆուտբոլիստների պատրաստության փոխադարձ կապը կարևորագույն գործոններից է, որով պայմանավորվում է խաղային գործունեության արդյունավետությունը:

Առանցքային բառեր: *Մարզիչ-մասնագետ, սոցիոլոգիական հարցում, հոգեբանական պատրաստություն, շարժողական ընդունակություններ, պատրաստվածության կողմեր, պատանի ֆուտբոլիստներ, մարզական բարձր նվաճումներ, նորագույն մարզման մեթոդիկա, տարեկան մարզման գործընթաց:*

О ЗНАЧИМОСТИ ОТДЕЛЬНЫХ СТОРОН ПОДГОТОВКИ В ТРЕНИРОВОЧНОМ ПРОЦЕССЕ ЮНЫХ ФУТБОЛИСТОВ
НИКОЯН М.Э.
ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ, РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Аннотация. Тенденция развития современного футбола требует напряжению игровой деятельности, резко обостряется конкуренция. Рост спортивных результатов предъявляет большие требования, по всем сторонам подготовки и особенно психологической.

Ключевые слова. тренер-специалист, социологический опрос, двигательные способности, психологические свойства, стороны подготовки, юные футболисты, высокие спортивные достижения, методика тренировок, круглогодичная тренировка.

THE IMPORTANCE OF MULTISIDE PREPARATION IN THE PROCESS YOUNG FOOTBALLERS TRAINING
NIKOYAN M.E.
ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND SPORT, ARMENIA, YEREVAN

Abstract: The tendency of modern football development, the increase of constant tension, sharply increases the competition for competitive places. The growth of training results presents huge demands not only for sportsman's physical, technical, tactical condition but also his psychological preparation. The mutual interconnection of teenage footballers' Preparation and sport achievements is one of the most important factors for the efficiency of playing activity.

Keywords: professional coach, sociological survey, mobility skills, psychological preparation, sides of training, junior football players, high training achievements of teenage footballers', the latest training methodology, the process of annual training.

Արդիականությունը: Համաշխարհային ֆուտբոլի զարգացման միտումները վկայում են խաղային գործողությունների անընդհատ լարվածության մեծացմամբ, մարզիկի ֆիզիկական պատրաստվածության նշանակությամբ, խաղային հնարքների ճշգրիտ կատարմամբ և բարձր էֆեկտիվությամբ: Առավել ևս կտրուկ սրվում է մրցակցությունը համաշխարհա-

յին ասպարեզում, մրցանակային տեղերի համար, առավելապես հաղթում է նա ով գերազանցում է մրցակիցներին ոչ միայն ֆիզիկական կամ տեխնիկատակտիկական բարձր պատրաստականությամբ, այլ նա, ով ունի ավելի բարձր բարոյահոգեբանական պատրաստություն:

Մարզական արդյունքների բուռն աճը մեծ պահանջներ է ներկայացնում ոչ միայն մարզիկի ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական պատրաստականությանը, այլ նաև նրա հոգեբանական պատրաստության համակարգի վրա:

Սպորտային հոգեբանության մեջ, հատկապես խորհրդային մասնագետների նախաձեռնությամբ [1,2,3,4,5], առանձնացվել են մարզիկների պատրաստության հետևյալ հիմնական ուղղությունները՝ ընդհանուր հոգեբանական պատրաստականություն և կոնկրետ մրցման հոգեբանական պատրաստականություն:

Մարզական նվաճումները առավելապես պայմանավորված են հոգեբանական համալիր գործոններով, որոնք ունեն բարդ կառուցվածք ու դրսևորման կոնկրետ բնույթ, մարզումներում ու մրցումներում դրսևորվում են տարբեր մարզաձևերին բնորոշ հատկանիշներով:

Այս ամենը ստիպում է, որ ֆուտբոլիստների պատրաստության մեթոդիկայի գործընթացում որոնել և կիրառել մանկավարժական, հոգեբանական նոր մոտեցումներ:

Ֆուտբոլում մարզական վարպետության հաջողությունը որոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ մարզիկի ֆիզիկական վարպետության մակարդակը, տակտիկական մտածելակերպը, տեխնիկական վարպետությունը, հոգեբանական պատրաստությունը նրա բնածին ձիրքը, մարզվելու ցանկությունը, սերը դեպի ֆուտբոլը, ինչպես նաև մարզական գործընթացի կազմակերպումը:

Մարզական նվաճումների և պատանի ֆուտբոլիստների պատրաստության փոխադարձ կապը կարևորագույն գործոն-

ներից է, որով պայմանավորվում է խաղային գործունեության արդյունավետությունը:

Նշված դրույթի իրականացումը հատկապես կարևոր է մանկապատանեկան ֆուտբոլում, քանի որ վերջինս հանդիսանում է մեր երկրի ազգային հավաքականի հերթափոխ: Այս տեսանկյունից կա որոշակի առաջընթաց, սակայն հիմնախնդիրը դեռևս հեռու է իր վերջնական լուծումից: Ուստի տվյալ ուղղվածության մեջ անհրաժեշտ են նպատակաուղղված և հեռանկարային աշխատանքներ: Մանկավարժական և հոգեբանական մոտեցումների և նախադրյալների հիմնավորման նպատակով ստորև քննարկվել են մի շարք հարցեր:

Նպատակը: Պատանի ֆուտբոլիստների պատրաստության կողմերի արդյունավետ մշակման ճանապարհով հասնել մարզման կատարելագործման:

Խնդիրները: Բացահայտել պատանի ֆուտբոլիստների պատրաստության կողմերի առանձնահատկությունները դրանց նպատակաուղղված մշակումը:

Մեթոդները: Հետազոտվել և ընդհանրացվել են հիմնախնդրի գիտամեթոդական աղբյուրները, կատարվել է մանկավարժական դիտումներ, սոցիոլոգիական հարցում և գիտափորձի արդյունքների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն:

Արդյունքները և դրանց քննարկումը: Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են պատանի ֆուտբոլիստների հետ աշխատող 50 մարզիչներ, որոնց միջին տարիքը կազմել է 39 տարեկան, մանկավարժական աշխատանքի ստաժը՝ 11.8 տարի:

Ուսումնասիրվել է մասնագետների կարծիքը տարբեր տարիքի պատանի ֆուտբոլիստների պատրաստության բոլոր կողմերին հատկացվող ժամանակը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Պատանի ֆուտբոլիստների պատրաստության բոլոր կողմերին հատկացվող ժամանակը տոկոսներով

Պատրաստության կողմերը	Տարիքային խմբերը		
	11 - 12	13 - 14	15 – 17
Տեսական	53	44	67
Տեխնիկական	100	96	93
Տակտիկական	33	96	98
Ֆիզիկական	27	62	98
Հոգեբանական	58	89	82
Ինտեգրալ	16	13	40

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ավագ սերնդի մասնակցությունն ուսումնասիրելու նպատակով հարցաթերթիկային հարցում ենք անցկացրել Երևան քաղաքի թվով 88 և Արմավիրի մարզի թվով 71 նախադպրոցական կրթական հաստատություններ հաճախող երեխաների տատիկների և պապիկների շրջանում:

Ընտանեկան հարաբերությունների, հաղորդակցման, սոցիալական փորձի և դաստիարակության ավանդույթների փոխանցման տեսանկյունից կարևոր է ընտանիքի կազմի ուսումնասիրումը. հարցվածներից 50,3 տոկոսի ընտանիքի անդամները 5-ն էին, 32,1 տոկոսը՝ 6, 17,5 տոկոսինը՝ 7 և ավելի: Հարցվածների 67,2 տոկոսը նշել են, որ ապրում են իրենց երեխայի և թոռնիկների հետ:

Մեր այն հարցին, թե երեխաների նորմալ, այդ թվում նաև մտավոր զարգացումը պայմանավորված է արդյոք ֆիզիկական դաստիարակությունից, հարցվողների 78,8 տոկոսը տվել են դրական պատասխան, 6,7 տոկոսը՝ բացասական, իսկ 14,5 տոկոսը դժվարացել են պատասխանել: Դեռ ավելին, Երևան քաղաքի տատիկների ու պապիկների 75,3 տոկոսը և Արմավիրի մարզի 69,1 տոկոսը նշել են, որ նման կապ տեսնում են երեխայի համակողմանի զարգացման հարցում: Ար-

ձանագրել ենք նաև այն փաստը, որ տատիկներն ու պապիկները դրական դիրքորոշում ունեն նաև սպորտի նկատմամբ: Այսպես՝ Երևան քաղաքի 73,8 և Արմավիրի մարզի հարցվածների 60,5 տոկոսը ցանկանում են, որ իրենց թոռնիկները զբաղվեն որևէ մարզաձևով:

Շատ կարևոր այն հարցին, թե դուք զբաղվում եք արդյոք Ձեր թոռնիկների ֆիզիկական դաստիարակությամբ, Երևանի տատիկների և պապիկների միայն 9,1 տոկոսն են տվել դրական պատասխան, 32,9 տոկոսը զբաղվում են դեպքից դեպք, 57,9 տոկոսը չեն զբաղվում, իսկ Արմավիրի մարզում ստացել ենք համապատասխանաբար՝ 8,4, 28,1 և 63,3 տոկոս արդյունքներ:

Աշխատանքում բացահայտել ենք, թե պապիկները և տատիկները ինչ դրդապատճառներից ելնելով կցանկանային զբաղվել թոռնիկների ֆիզիկական դաստիարակությամբ, քանզի դրդապատճառը հոգեկան այն երևույթն է (միտք, մտածելակերպ, հույզ, որն ակտիվություն է հարուցում, օրգանիզմին մղում ակտիվ գործունեության: Երևան քաղաքի պապիկների և տատիկների 78,4 տոկոսը, Արմավիրի մարզի պապիկների և տատիկների 76,4 տոկոսը կցանկանային զբաղվել թոռնիկների ֆիզիկական դաստիարակությամբ, համապատասխանաբար՝ 62,5 և 49,2 տոկոսը թոռնիկների օրգանիզմը կռվելու և կազդուրելու նպատակով՝ 61,3 տոկոսը և 43,6 տոկոսը՝ լիարժեք ֆիզիկական զարգացման համար, 42,0 տոկոսը և 21,1 տոկոսը՝ ճիշտ կեցվածքի ձևավորմանը խթանելու և հարթաթաթությունը կանխելու 21,5 տոկոսը, 8,42 տոկոսը՝ անձի բարոյահոգեբանական գծերի դաստիարակության, 28,4 և 19,7 տոկոսը անհրաժեշտ շարժողական գործողությունների զարգացումն ապահովելու նպատակով:

Հետազոտության արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ պապիկների և տատիկների մեծամասնությունը ակնկալում են ֆիզիկական դաստիարակության միջոցով թոռնիկների առողջության ամրապնդումը:


Ընտանեկան դաստիարակության, այդ թվում ֆիզիկական դաստիարակության ավանդույթները, որոնք հայ ընտանիքներում գալիս են հազարամյակների խորքից, ունեն մանկավարժական, բարոյական, սոցիալական մեծ արժեք: Համաձայն մեր հետազոտության խնդրի, բացահայտել ենք ավագ սերնդի պատրաստության կարևոր բաղադրիչը՝ նրանց կարողությունները վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների շարժողական գործողությունների ուսուցման վերաբերյալ /տրամագիր 1/: Մտացված արդյունքները ցույց են տալիս, որ տատիկները ու պապիկները ակնհայտորեն բարձր են գնահատում սեփական կարողությունները վաղ տարիքի երեխաների շարժողական գործողությունների ուսուցման հարցերում /բացառությամբ կոփման, լողուսուցման և մերսման/:

Մինչդեռ նրանց հետ կատարած մեր գործնական աշխատանքը վկայում է, որ այդ հարցերում նրանց պատկերացումները շատ մակերեսային են և չեն համապատասխանում նշված շարժողական գործողությունների մեթոդապես ճիշտ ուսուցմանը:

Աշխատանքում ուսումնասիրել ենք, թե ինչ պատճառներ են խոչընդոտում մեծահասակներին՝ ընտանեկան պայմաններում իրենց թոռնիկների հետ ֆիզիկական դաստիարակությամբ ակտիվորեն զբաղվելուն:

Տրամագիր 1

Ավագ սերնդի պատրաստվածության աստիճանը նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության հարցերում



Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ թե Արմավիրի մարզում, և թե Երևան քաղաքում կարևորում են սոցիալական պայմանների անբավարար լինելը, գույքի, հանդերձանքի, բնակավայրերում խաղահրապարակների բացակայությունը, Երևանում նաև ազատ ժամանակի բացակայությունը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն փաստին, որ թե Երևան քաղաքում, և թե Արմավիրի մարզում մեծահասակները կարևորել են բժշկակենսաբանական, հիգիենիկ, հոգեբանամանկավարժական և հատուկ մեթոդական գիտելիքների բացակայությունը և դրա հետ առնչվող մայրենի լեզվով հատուկ գրականության բացակայությունը:

Այս պարագայում կարևոր է, որ նախադպրոցական կրթական հաստատությունները քարոզչական, լուսավորչական աշխատանքներ և միջոցառումներ կազմակերպեն նաև

մեծահասակների համար՝ ընտանեկան պայմաններում երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Ստահոգիչ է այն փաստը, որ թե Երևան քաղաքի, և թե Արմավիրի մարզի նախադպրոցական կրթական հաստատություններում նշված հարցերն ամեննին էլ չեն կարևորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նալչաջյան Ա.Ա., Ազգային հոգեբանություն և ընտանիք // ընտանիք և ազգային հոգեբանություն, Երևան, 1997, էջ 38:

2. Սեդրակյան Ա.Ա., Ընտանիքի հոգեբանություն /մեթոդաբանական վերլուծություն/, Երևան, «Ուրարտու» համալսարան, 2010, 415 էջ:

3. Антонова А.И., Социология семьи: Учебник, М.,ИНФРА-М, 2005, 640 ст.

4. Богуславская, Организация совместного обучения детей и родителей за рубежом:// Педагогика, 2015.- С-114-119

5. Лоткина Т.В, Социальная педагогика. Защита семьи и детства. Учебник. Пособие для студентов высшего учебного заведения. М., «Издательский центр», «Академия», 2007.-208 ст.

**ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
 ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
 ԻՆՔԼՈՂՈՇՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ.Գ.**

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ՀՊՄՀ, Բ.ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Հոդվածում առաջարկվում է Հայաստանում ներառական կրթության զարգացման ուղի՝ ներքևից վերև, հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման զարգացման միջոցով՝ տվյալ հիմնահարցի ԱՄՆ-ի օրինակի հիման վրա: Ինքնորոշումը դիտարկվում է որպես անձնային հատկություն, որը պետք է զարգացնել հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ՝ միկրոհամակարգից սկսած:

Առանցքային բառեր՝ ներառական կրթություն, համընդհանուր ներառականություն, հաշմանդամություն ունեցող անձ, ինքնորոշում, էկոլոգիական մոտեցում:

**РАЗВИТИЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ ПРИ ПОМОЩИ
 РАЗВИТИЯ САМООПРЕДЕЛЕНИЯ ЛИЦ С ИНВАЛИДНОСТЬЮ
 КАРАПЕТЯН Л.Г.**

АГПУ ИМ.Х.АБОВЯНА, Г.ЕРЕВАН, АРМЕНИЯ

Аннотация. В статье предлагается путь развития инклюзивного образования в Армении “снизу-вверх” при помощи развития самоопределения лиц с инвалидностью на примере данного вопроса в США. Самоопределение рассматривается как личностное качество, которое нужно развить у детей с инвалидностью, начиная с микро-системы.

Ключевые слова: инклюзивное образование, тотальная инклюзия, личность с инвалидностью, самоопределение, экологический подход.

**THE DEVELOPMENT OF INCLUSIVE EDUCATION THROUGH
 DEVELOPMENT OF SELF-DETERMINATION
 OF PEOPLE WITH DISABILITIES
 KARAPETYAN L. G
 KH.ABOVYAN ASPU, YEREVAN, ARMENIA**

Abstract. In the article a “bottom-up” way to develop the inclusive education in Armenia is suggested through development of self-determination of people with disabilities based on the USA example. The self-determination is considered as a personal characteristic which should be developed in children with disabilities starting from their microsystem.

Keywords: *inclusive education, total inclusiveness, person with disability, self-determination, ecological approach.*

Արդիականությունը: Հայաստանում ներառական կրթությանն ուղված առաջին քայլերը սկսել են իրականացվել դեռ 2000 թվականների սկզբներից, երբ Երևանի հանրակրթական դպրոցներից մեկի տնօրենը համարձակվեց համաձայնել սովորելու ընդունել հոգեկան զարգացման խանգարումով առաջին աշակերտին դպրոցի դեռևս անպատրաստ ֆիզիկական պայմաններով, ուսումնական ծրագրերով, ուսուցչական և մասնագիտական կազմով: 2005 թ-ին Հայաստանում ընդունվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին օրենքը, որով ներառական կրթությունն ընդգրկվեց ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: 2012 թվականին ՀՀ Ազգային Ժողովի կողմից հաստատվեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, ըստ որի ներառական կրթության մասին օրենքը դարձավ հանրակրթության օրենքի մի մաս, դրանով հանրակրթական համակարգում որդեգրվեց համընդհանուր ներառականությունը, այսինքն՝ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է պատ-

րաստ լինեն իրականացնելու ներառական կրթություն: Համընդհանուր ներառականությունը կյանքի կոչելու համար վերջնաժամկետ սահմանվեց 2022թ., հետագայում երկարաձգվեց մինչև 2025-ը՝ ելնելով ոլորտում առկա խնդիրների լուծում պահանջող մեծ ծավալից: Առաջնային հիմնախնդիրներից է հանդիսանում մարդկային ռեսուրսների վերապատրաստումը: Չնայած մեր երկրում իրականացվող մեծածավալ կրթական բարեփոխումներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ իրականացված զրույցի ընթացքում նրանց կողմից արտահայտած մեծ մտավախություններից է իրենց երեխայի ճակատագիրը դպրոցից հետո: Շատ ծնողներ, քաջ գիտակցելով, որ կարևոր է, որ իրենց երեխան ձեռք բերի ինքնուրույնություն, իրենց երեխային ինքնուրույն կամ անկախ կյանքի նախապատրաստելը համարում են շատ դժվար հարց:

Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության զարգացման վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տվել, որ դրա կարևորագույն բաղադրիչներից է նրանց ինքնորոշումը: Իսկ ի՞նչ է ինքնորոշումը: Ներառականության վերաբերյալ հայալեզու գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «ինքնորոշում» հասկացությունը, որպես առանձին երևույթ, որի ձևավորումը, հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց մոտ ունի մեծ կարևորություն, հանդիպում է միայն անկախ, «ինքնուրույն կամ անկախ կյանք»-ը սահմանելիս և դիտարկվում է իրավունքների դաշտում, օրինակ՝ «Անկախ կյանքը փիլիսոփայություն է և հաշմանդամություն ունեցող մարդկանց շարժում՝ հիմնված համայնքում ապրելու իրավունքների վրա, այդ թվում՝ ինքնորոշման, հավասար հնարավորությունների եւ հարգանքի վրա»: [Էջ 23, 1]: Այն սահմանվում է նաև որպես մասնագիտական կողմնորոշման իրականացման հիմնական

սկզբունքներից մեկը և դիտարկվում է հենց մասնագիտական կողմնորշման շրջանակներում: [էջ 16, 2]

Ինքնորոշման մասին առաջինը գրել է դեռ 17-րդ դարում անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքը՝ այն համարելով բոլոր մարդկանց հիմնարար իրավունք, այդ թվում՝ ազատության, հավասարության և սեփական կամքն իրագործելու [5]: Չնայած ինքնորոշման մասին խոսվել է դեռ շատ վաղուց, սակայն այդ հարցի շուրջ ուսումնասիրությունների համար դեռ շատ անելիքներ կան մինչ օրս: Ամերիկյան հայտնի «The Merriam-Webster Dictionary» բառարանում «ինքնորոշում» հասկացությունը անձնային մակարդակում սահմանվում է որպես առանց արտաքին ճնշման ինքնուրույն ընտրություն կատարելու կարողություն [4], իսկ հոգեբանության մեջ այն դիտարկվում է դրդապատճառների հոգեբանության շրջանակներում:

Գոյություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման վերաբերյալ մի քանի տեսություններ, որոնցից ամենաընդգրկունն այն ուսումնասիրում է Էկոլոգիական մոտեցման տեսանկյունից: Էկոլոգիական մոդելն անձին դիտարկում է իր բոլոր կարողություններով և հատկություններով: Այսօր տվյալ տեսության համաձայն ինքնորոշումը սահմանվում է որպես մի համալիր գործընթաց, որի հիմնական նպատակն է կյանքի և անձի համար դրա կարևոր բնագավառների հանդեպ անձի կողմից ցանկալի վերահսկողության մակարդակի ձեռք բերումը: Այս սահմանմամբ ինքնորոշումը իրավական բնագավառից ընդլայնվում է դեպի կյանքի բոլոր բնագավառներ և դիտարկվում որպես մարդու մտքերի, զգացմունքների և վարքի հիմնական որոշիչ և պատասխանատվության միջոց, իսկ հոմանիշներ են հանդիսանում անկախությունը և ինքնուրույնությունը: [5]

Ներառական կրթության շրջանակներում տվյալ հասկացության ուսումնասիրման կարևորությունն այն է, որ անձի ինքնորոշումը պետք է հանդիսանա ներառական կրթության նպատակը, այն է՝ ձևավորել ԿԱՊԿՈւ երեխաների անձնային ինքնորոշման հատկություններ կամ ինքնորոշված անձ: Ինքնորոշված անձը, ինչպես նշում են որոշ հեղինակներ՝ Ջ.Էյբերին, Ք.ՄըքԳրուն, Ջ.Սմիթը, պետք է քաջատեղյակ լինի իր նախասիրությունների, ուժեղ և թույլ կողմերի մասին, կարողանա սահմանել նպատակներ, լինել ասերտիվ, կարողանա արտահայտվել, որպեսզի հասնի իր ցանկալի արդյունքին՝ հարգելով կողքինին, կարողա սեփական գործողությունների պլան կազմել այդ արդյունքին հասնելու համար: [3]

Էկոլոգիական մոտեցման մեջ դիտարկվում է անձի մոտ այդ հատկությունների ձևավորման գործընթացում միջավայրի դերը և նշանակությունը, որտեղ կարևորվում է անձի միկրոհամակարգից (ընտանիքի) մինչև մակրոհամակարգի (հասարակության, հասարակական ինստիտուտների) դերն ու արժեքները: Ինքնորոշման էկոլոգիական տեսության հեղինակ Բ.Էյբերիի համաձայն՝ հաշմանդամությունից առաջացած դժվարությունները կարող են ազդել անձի ինքնորոշման վրա՝ սկսած միկրոհամակարգից՝ ընտանիքից: [էջ 33-34, 5] Դրանով շեշտվում է, որ հենց ընտանիքից պետք է սկսվեն անձի ինքնորոշումը և ներառականությունը: Այս տեսության մեջ կարևորվում է ինքնորոշմանը նպաստող և դրա բաղադրիչներ հանդիսացող հատկանիշների ձևավորումը՝ անձնային տեսլականի և նպատակների սահմանում, անձնային ընտրության և որոշման կայացում, վարքի ինքնակարգավորում, միջանձնային խնդիրներ լուծելու կարողություն, անձնական շահերի պաշտպանություն, սոցիալական հմտություններ (որը հաճախ խնդիր է հաշմանդամություն ունեցող անձանց համար), ինքնուրույն ապրելու հմտություններ [էջ 51-65, 5]:

Յուրաքանչյուր բաղադրիչի համար առաջարկվում են գնահատման չափանիշներ՝ ելնելով անձնային հատկություններից և նպատակներից, նրա հաշմանդամությունից բխող կարողություններից և դժվարություններից, մշակութային հատկանիշներից, սոցիալական միջավայրից և ռեսուրսներից:

ԱՄՆ-ի դպրոցներում, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման հիմնահարցերով զբաղվող հաստատություններում մեծ ուշադրություն են դարձնում նշված բաղադրիչներին՝ դրանք ընդգրկելով անհատական ուսուցման և այլ պլանների մեջ, և երեխայի անձի ձևավորման առանցքում դնում են նրա ինքնորոշումը:

Դրա հետ մեկտեղ աշակերտներին սովորեցնում են ընտրություն կատարելիս հաշվարկել սեփական հնարավորությունները, ինչպես նաև իրենց ընտրությունից և կայացրած որոշումներից բխող ռիսկերը, որ այդ դեպքում կարող են նաև անհաջողության հանգեցնել: Սրանով ձևավորում են սեփական որոշումները կայացնելիս դրանց համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն, այն անդրադառնում է «Ես» կերպարի, ադեկվատ ինքնագնահատականի ձևավորման վրա: Դրա հետ մեկտեղ սովորեցնում են հարգել ուրիշներին, նրանց կարծիքը:

Գոյություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմանն ուղղված մշակված արդյունավետ մեթոդներ, որոնք կիրառվում են որպես ամբողջական ծրագրեր և ընդգրկված են ԱՄՆ-ի դպրոցներում, տարբեր հաստատությունների գործունեության պլաններում, և այսօր դա տալիս է իր արդյունքները: Վերջիններս տեսանելի են այն հարցերում, որ հենց հաշմանդամություն ունեցող անձինք են այսօր իրենց իրավունքների և բարեփոխումների պահանջա-

տերերը՝ դառնալով սեփական շահերի պաշտպան՝ քաջատեղյակ լինելով նաև սեփական իրավունքներից:

Այսպիսով, համատարած ներառականության արմատավորման համար անհրաժեշտ են ոչ միայն դրան ուղղված օրենքների ընդունումը, ինչը նշանակում է գործընթացի իրականացում վերևից ներքև, այլ նաև դրա՝ ներքևից վերև իրականացման խթանում, որը հնարավոր է հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմամբ, ովքեր կդառնան պահանջատեր փոփոխությունների համար: Այս գործընթացը պետք է սկսել ընտանիքներից և դպրոցներից, այն ինստիտուտներից, որոնք դաստիարակում և կրթում են հաշմանդամություն ունեցող երեխաներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաթոյան Զ. Ներառական հանդիսումների կազմակերպման ուղեցույց: http://www.un.am/up/library/Inclusive_Meetings_Guidelines_Arm.pdf

2. Ուղեցույց հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթության և կողմնորոշման ծառայությունների. Գլխ. խմբագիր Սարատիկյան Լ., Երևան 2014, http://life-isability.am/Docs/Publications/Annex%205.%20PWD%20Proforientation_Manual.pdf

3. Abery B., McGrew K., Smith J. Validation of an ecological model of self-determination for children with disabilities. Technical Report #2. Minneapolis, MN, UofM, ICI, 1995

4. The Merriam-Webster Dictionary, <https://www.merriam-webster.com/dictionary/self-determination>

Wehmeyer M.L., Abery B.H., Mithaug D.E., Stancliffe R.J., Theory in Self-Determination: Foundations for Educational Practice, Springfield, Ill., USA, 2003

**ԱՆՁԻ ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
 ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ. Մ.**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,
 ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփոգիր: Հոդվածում ներկայացված է անձի կենսունակության հիմնախնդիրների լուսաբանման տեսական հիմքերը: Կենսունակության տեսակետները վերլուծվել են տարբեր հոգեբանական տեսանկյուններով, առանձնացված են նրա հիմնարար և մասնակի բնորոշումներ, որոնք յուրահատուկ են նաև սպորտային գործունեությանը և մարզիկի անձին ու հոգեկանին: Անձի կենսունակությունը անհրաժեշտ պայման է, որը նպաստում է արդյունավետ եղանակներով հաղթահարելու կյանքի սթրեսային իրավիճակներ, այդ թվում նաև սպորտում, ինչը ավելի է կարևորում տվյալ ֆենոմենի ուսումնասիրությունը:

Առանցքային բառեր կենսակայունություն, հսկում, ներառվածություն, ռիսկի դիմում

**ПРЕДСТАВЛЕНИЕ О ЖИЗНЕСТОЙКОСТИ ЛИЧНОСТИ В
 ПСИХОЛОГИЧЕСКОЙ НАУКЕ
 КАРАПЕТЯН Л. М.
 ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ,
 ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В статье анализируются теоретические основы изучения проблемы жизнестойкости личности. Концепции жизнестойкости проанализированы в контексте различных психологических подходов, выделены ее фундаментальные и частные определения. Жизнестойкость – необходимое условие, которое способствует успешному преодолению стрессовых ситуаций жизни, связи с чем и актуализируется необходимость изучения этого феномена в современных условиях.

Ключевые слова: *жизнестойкость, контроль, вовлеченность, принятие риска.*

**THE UNDERSTANDING PERSONALITY HARDINESS IN
 PSYCHOLOGY
 KARAPETYAN L.M.
 YEREVAN STATE UNIVERSITY, YEREVAN, ARMENIA**

Abstract. Theoretical aspects of personality hardiness are analyzed in this article. The concepts of hardiness are analyzed in the context of various psychological approaches, where its fundamental and particular definitions are singled out. The hardiness is an essential condition that contributes to the successful overcoming of stressful situations of life, thus the need for studying this phenomenon in modern conditions gets more actualized.

Keywords: *hardiness, control, commitment, challenge.*

Արդիականություն: Կենսակայունությունը անձի հոգեկան ոլորտի այն երևույթներից է, որը դժվարին իրավիճակում, մասնավորապես ներկայիս փոփոխական պայմանների առկայության դեպքում, հանդիսանում է անձի ամբողջականությունը պահպանող ռեսուրսներից մեկը, ուստի, կենսակայունության ուսումնասիրման հիմնահարցը հայտնվում է հոգեբան հետազոտողների ուսումնասիրությունների կիզակետում, որն էլ պայմանավորում է մեր հետազոտության արդիականությունը:

Կատարված աշխատանքի հիմնական մեթոդը գրականության գիտատեսական վերլուծության մեթոդն է:

Մեր կողմից կատարված տեսա-մեթոդոլոգիական հետազոտության **նպատակն է** տալ անձի կենսակայունության հիմնախնդրի վերաբերյալ առավել հստակ պատկերացում:

Նպատակի իրագործման համար մեր առջև դրված են եղել հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել և դուրս բերել անձի կենսակայունության վերաբերյալ հիմնական մոտեցումներ:

րը, ինչպես նաև կատարել կենսակայունության բաղադրիչներ
 ըի ուսումնասիրություն:

Աշխատանքի իրականացման համար որպես տեսամեթո-
 դոլոգիական հիմք հանդիսացել է Ս.Մադդի կենսակայունու-
 յան հայեցակարգը:

Հոգեբանության դաշում կենսակայունությունը դարձել է
 գիտական հետազոտության առարկա 20-րդ դարի 70-
 ական թվականներից: Առաջին անգամ հնչել է «անխոցելի» տերմին-
 նը (Garmezy 1976), որը հանգուցային էր կյանքի դժվարին ի-
 րավիճակներում հայտնված երեխաներին և դեռահասներին
 բնութագրելիս: Հետագայում «անխոցելի» բառից անցում կա-
 տարվեց «կենսունակություն» տերմինին («resilience»), քանզի
 «անխոցելի» տերմինն այդքան էլ չէր արդարեցնում այդ երե-
 խաներին և դեռահասներին բնութագրելիս: Նշենք, որ «կեն-
 սունակություն» տերմինին համընթաց գիտնականների կող-
 մից առաջ քաշվեց «կենսակայունությունը»: «Կենսակայունու-
 թյուն»-ը (Hardiness) առաջին անգամ հոգեբանության դաշտ
 ներմուծվել է Ս. Մադդի և Ս. Կոբասայի կողմից: Ըստ Ա. Լակ-
 տինոնովայի՝ այն ավելի լայն հասկացություն է, քան կենսու-
 նակությունը և ավելի ճիշտ է մեկնաբանում մարդու հոգեվի-
 ճակը կյանքի դժվարին պայմաններում [3]:

Կատարված տեսական վերլուծության շրջանակներում
 որպես նշանակալի մենք անդրադարձել ենք Ս. Մադդի և Ս.
 Կոբասայի մոտեցմանը կենսակայունության հարցին (1979,
 1984): Կենսակայունություն հասկացության մեջ ներառված
 անձնային կառույցները կարող են նպաստել դրական աշ-
 խարհընկալման, կյանքի որակի բարձրացմանը, ինչպես նաև
 խոչընդոտներն և սթրեսները վերափոխել զարգացման և աճի
 աղբյուրի: Դա այն գործոնն է, ներքին ռեսուրսը, որը նպաս-
 տում է ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական առող-
 ջության պահպանմանը: Կենսակայունությունը որպես հոգե-

բանական երևույթ, իր մեջ է ընդգրկում է երեք բաղադրիչներ՝ ներգրավվածություն, հսկում, ռիսկի դիմում:

Ներգրավվածությունը (commitment) տեղի ունեցող իրադարձություններում անձի համար առավելագույն արժեքավոր և հետաքրքիր որևէ բան գտնելն է: Բարձր ներգրավվածության մակարդակ ունեցող մարդը ունենում է իր կենսագործունեությունից մեծ բավարարվածության զգացում: Ներգրավվածության բացակայությունը:

Հսկումը (control) ցույց է տալիս մարդու վստահությունը, որ նա ազդեցություն է ունենում արդյունքի վրա: Բարձր հսկման մակարդակ ունեցող մարդը դառնում է սեփական գործունեության, կյանքի ուղու ստեղծողը:

Ռիսկի ընդունումը (challenge) բաղադրիչը բնութագրվում է իր հետ տեղի ունեցող իրադարձությունների ազդեցությամբ իր զարգացման վրա, անկախ դրանց բնույթից՝ դրական, թե բացասական: Մարդն իր կյանքի ուղին համարում է փորձի ձեռք բերման միջոց, և գործելու ընդունակություն նույնիսկ հաջողության բացակայության դեպքում:

Որպես այդպիսին՝ կենսակայունությունը ճանապարհ է դիմակայելու սթրեսին: Միայն մեկ կամ երկու բաղադրիչների առկայությունը չի կարող ապահովել անձի ամբողջականությունը: Անհրաժեշտ է ունենալ երեք բաղադրիչները միասին: Եթե կենսակայունության բաղադրիչների բարձր մակարդակ է առկա լինում, հեշտանում են կենսակայուն գործողությունները, որոնք ունենում են սոցիալական աջակցության կառուցողական արդյունք՝ օգտագործելով խնդիրը, լուծման ռազմավարությունը և ունենալ արդյունավետ ինքնակառավարում: Այս տոկոսն գործընթացում սթրեսը և լարումը նվազում են և հոգեկան առողջությունը ավելի շատ բարձրանում է, քան նվազում [7]:

Կենսակայունության հիմնահարցին անդրադառնալիս Դ.Լեոնտևը կենսակայունությունը բնութագրում է որպես սթրեսային իրավիճակներին դիմադրելու անձի ընդունակությունների չափ՝ պահպանելով ներքին հավասարակշռվածությունը և չնվազեցնելով գործունեության հաջողությունը [5]:

Մ.Լոգինովան դիտարկում է կենսակայունությունը որպես արտաքին միջավայրի բացասական ազդակներին դիմակայելու ինտեգրալ բնութագրիչ, որն օգնում է հաղթահարել կյանքի դժվարությունները՝ տրանսֆորմացնելով դրանք սուբյեկտի զարգացմանը նպաստող իրավիճակի: Այս ամենից ելնելով հեղինակն նշում է, որ կենսակայունությունն որպես համոզմունքների համակարգ նպաստում է սուբյեկտի պատրաստ լինելուն մասնակցել, հսկել և ղեկավարել էքստրեմալ իրավիճակները, ընկալել բացասական իրադարձությունները որպես փորձ և բարեհաջող հաղթահարել դրանք [6]:

Հոգեբանական գիտության մեջ կա տեսակետ համաձայն որի՝ սուբյեկտի ներառվածությունը «հասարակական հարաբերությունների համակարգի մեջ» նպաստում է անձի կենսակայունությանը [1]:

Մենք ևս հակված ենք այդ մտքին, որ եթե անձը մասնակից է իրավիճակին, չի փախչում խնդրից, այնքան մեծ է նրա կենսակայունության մակարդակի պահպանման հավանականությունը:

Է.Վերները նշում է, որ բարձր կենսակայունություն ունեցող անձիք հավատում են, որ իրենց սեփական գործողությունները դրական դեր են կատարում իրենց իսկ կյանքում [8]:

Նման տեսակետ է տալիս նաև Ս.Խանգը, նշելով՝ որ բարձր կենսակայունություն ունեցող մարդիկ ունեն ավելի մեծ հավանականություն տեղի ունեցող փոփոխությունների ընթացքում նման առողջ և կյանքում տեղի ունեցող իրադարձությունները ընդունել որպես դրական: Ի.Սուլկովայի և Պ.Տո-

մանելի հետազոտությունները վկայում են, որ կենսակայունությունը ազդում է տիրապետման ռեսուրսների վրա՝ բարձրացնելով ինքնաարդյունավետությունը [2]:

Ա. Բոգոմազը նշում է, որ կենսակայուն անձը ունի բավարարվածություն իր կյանքից և բարձր է այն վերաիմաստավորում, որպես կանոն ցուցաբերում է ակտիվության և նպաստակառուցիվածության բարձր մակարդակ [4]:

Եզրակացություն: Կատարված վերլուծությունից ելնելով մենք կենսակայունությունը դիտարկում ենք որպես անձի կարևոր բնութագրերից մեկը, որը նպաստում է ինչպես սեփական անձի, այնպես էլ շրջապատի հետ ներդաշնակության մեջ լինելուն, դրական հարաբերություններ ստեղծելուն, անձին տալիս է հնարավորություն յուրովի մոտենալ դժվարություններին, որոնք առաջանում են կյանքի տարբեր փուլերում, փորձել գտնել ուղիներ, դրանք հաղթահարելու համար: Կենսակայունությունը նպաստում է անձի հոգեբանորեն պաշտպանված լինելու զգացողությանը, ուժ է տալիս անձին դժվարությունների հաղթահարման գործընթացում, արդյունավետ կենագործունեության, ինչպես նաև նոր գաղափարների իրագործման հարցում: Այն նպաստում է ստեղծված իրավիճակից անձի համար կարևոր բան քաղելուն, ինչպես նաև կյանքից բավարարվածության առաջացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Анцыферова Л.И. Личность в трудных жизненных условиях: переосмысление, переобразование ситуаций и психологическая защита // Психологический журнал, 1994 Т.15, N 1 ,стр.3-19

2. Евтушенко, Е. А. Жизнестойкость личности как психологический феномен // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии. Сб:ст.по матер.LX межд. науч.-практ. конф.№ 1(58), Новосибирск 2016

Հասանելի է <https://sibac.info/conf/pedagog/lx/46481> հղմամբ, ներբեռնված է 07.07. 2017

3. Лактионова А.И. «Жизнеспособность» в структуре психологических понятий //Вестник Московского государственного областного университета. Серия. Психологические науки.-2010-№ 3, стр. 11-15

Հասանելի է <http://vestnik-mgou.ru/Articles/Doc/2642> հղմամբ, ներբեռնված է 11.02.2017

4. Лапкина Е.В. Совладающее поведение, жизнестойкость и жизнеспособность личности: связь понятий, функций. вестник КГУ им. Н.А. Некрасова 2015, Том 21, номер 4, стр.130-133

5. Леонтьев Д. А., Рассказова Е. И.: Тест жизнестойкости, Москва: Смысл, 2006г. 63 стр.

6. Логинова М.В. Жизнестойкость как внутренний ключевой ресурс личности. // Вестник Московского университета МВД России. – 2009. – № 6. – С. 19–22

Հասանելի է <https://elibrary.ru/item.asp?id=13020378> հղմամբ, ներբեռնված է 12.03.2017

7. SALVATORE R. MADDI. Hardiness: The courage to grow from stresses. University of California, Irvine, USA, The Journal of Positive Psychology, July 2006; 1(3): 160–168

8. Werner E. Resilience in development // Current direction in psychological science. 1995. Vol. 4. P. 81-85

Հասանելի է <https://socsci.viu.ca/sites/default/files/resilience-in-development.pdf> ներբեռնված է 04.02.2017

**«ՅՈՒՆԻՖԱԻԴ ՄՊՈՐՏԸ» ՈՐՊԵՍ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ԵՎ
 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Լ.Ա.

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,
 ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: «Յունիֆայդ սպորտը» Հատուկ Օլիմպիադաների ներառական ծրագիր է, որտեղ մտավոր զարգացման խնդիր ունեցող և մտավոր զարգացման խնդիր չունեցող երեխաները միասին մարզվում են և մասնակցում մրցումների: Այն սոցիալական ներառման ակտիվ միջոց է, որը թույլ է տալիս այս երկու խմբի երեխաներին համատեղ անցկացնելու ֆիզիկական կուլտուրայի դասընթացները:

Առանցքային բառեր. *Յունիֆայդ սպորտ, հատուկ օլիմպիադաներ, մտավոր զարգացման խնդիր, սոցիալական ներառում, առողջության պահպանում, ֆիզիկական դաստիարակություն:*

**ЮНИФАЙД СПОРТ КАК ЗАЛОГ УСПЕШНОЙ ИНКЛЮЗИИ И
 СОХРАНЕНИЯ ЗДОРОВЬЯ ДЛЯ ДЕТЕЙ С
 ОГРАНИЧЕННЫМИ ИНТЕЛЛЕКТУАЛЬНЫМИ
 ВОЗМОЖНОСТЯМИ
 МНАЦАКАНЯН Л.А.
 АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
 УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА,
 АРМЕНИЯ, ЕРЕВАН**

Аннотация. Юнифайд спорт является инклюзивная программа Специальной Олимпиады, в котором сочетаются дети с ограниченными интеллектуальными возможностями (спортсмены) и дети без ограниченными интеллектуальными возможностями (юнифайд партнеры) в одну команду. Юнифайд спорт предназначен для содействия социаль-

ной интеграции, позволяя детям без ограниченными интеллектуальными возможностями совместно проводить уроки физкультуры.

Ключевые слова: Юнифайд спорт, специальные олимпиады, ограничение интеллектуальной развития, социальная инклюзия, сохранение здоровья, физическое воспитание.

UNIFIED SPORTS AS A KEY TO SUCCESSFUL INCLUSION AND PRESERVATION OF HEALTH FOR CHILDREN WITH INTELLECTUAL DISABILITIES

MNATSAKANYAN L.A.

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KH. ABOVYAN, YEREVAN, ARMENIA

Abstract. Special Olympics Unified sports is an inclusive program which combines individuals with intellectual disabilities and (Athletes) and individuals without intellectual disabilities (Unified Partners) on sports teams for training and competition. Unified sports is dedicated to promoting social inclusion by allowing individuals with and without intellectual disabilities opportunities to share sport during physical Education classes.

Key words: Unified sport, special olympics, intellectual disability, social inclusion, health preservation, physical education.

Սպորտի և հատուկ օլիմպիական շարժման նպատակն է ընդլայնել մտավոր զարգացման խնդիր ունեցող անձանց սոցիալիզացման և ներառման գործընթացը, ստեղծել և կազմակերպել առողջարարական, մարզական պարապմունքներ:

Մտավոր զարգացման խնդիր ունեցող անձանց առողջ ապրելակերպի ժամանակակից հասկացությունը իրենից ներկայացնում է սոցիալիզացման, ինտեգրման արդյունավետ միջոց և սպորտային ոճի կենսունակության ձևավորում: [2]

«Հատուկ օլիմպիադաները» հիմնադրվել է 1963թ. Յունիս Քենեդու և նրա ամուսին՝ Մերժանտ Շրայվերի կողմից:

Մտավոր զարգացման խնդիր ունեցող անձանց մասնակցությունը սպորտում բարձրացնում է «սպորտը բոլորի համար» կարգախոսի նշանակությունը հասարակության տար-

բեր շրջանակներում, նաև բարձրացնում է նման խնդիրներ ունեցող մարդկանց, նրանց հարազատների հետաքրքրությունը հանդեպ հատուկ սպորտը: [3]

Առաջին կարևորագույն դերը, որի մասին արժե խոսել՝ հասարակության մեջ ներառումն ապահովելու մասին է: [2] Սպորտը ստեղծում է հումանիստական միջավայր: Տեղի է ունենում շփում, ընկերական միջավայրի ապահովում, քաղաքացիական ու պրոֆեսիոնալ համագործակցում: Այս գործընթացի իրականացումը պահանջում է հատուկ ծրագրերի մշակում և ներդրում, որը կարելի է կատարել մի քանի փուլերով՝

- ծնողներին, ուսուցիչներին ներգրավել և կողմնորոշել մտավոր զարգացման խնդիր ունեցող անձանց ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնահարցերի կազմակերպման գործընթացում՝ սպորտ-առողջարարական միջոցառումների կազմակերպում, սպորտային դահլիճների բարեկարգում, սննդի ապահովում և այլն,

- սպորտ-առողջարարական և կրթական միջոցառումների կազմակերպում՝ համալիր պարապմունքներ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլն:

Եվ ի վերջո պետք է հասկանալ, որ եթե մենք փորձում ենք զարգացնել այս երեխաների հոգեկան գործընթացները, չենք կարող դա անել, եթե չզարգացնենք այս երեխաների շարժողական ոլորտը, չապահովենք նրանց ճիշտ ապրելակերպը:

Սպորտային մարզումների ընթացքում կատարելագործվում է մտավոր զարգացման խնդիր ունեցող երեխաների ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր զարգացումը, ամրապնդվում է փոխհարաբերությունները ընտանիքում, իսկ հասարակությունը միավորվում է նրանց հետ հավասար պայմաններում:

Ժամանակին «ներգրավված սպորտ» հասկացությունը փոխարինվեց «Յունիֆայդ սպորտ» հասկացությամբ: Վերջինս մեծ տարածում ունի ամբողջ աշխարհում և համատարած ընդգրկված է միացյալ նահանգների դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ծրագրերի մեջ [3,4]: Միացյալ սպորտի դերն ու արժեքը պայմանավորված է նաև ներառական կրթության ակտիվ իրագործման հետ: Ֆիզիկական կուլտուրայի ժամերին միացյալ սպորտի ծրագիրը թույլ է տալիս ուսուցիչներին ակտիվ ներգրավել մտավոր զարգացման խնդիր ունեցող երեխաներին և հավասար մթնոլորտ ապահովել աշակերտների միջև: Այսպիսով, յուրաքանչյուր երեխա, ով ունի մտավոր զարգացման խնդիր (մարզիկ) ունի իր զուգընկերը, ով չունի մտավոր զարգացման խնդիր (զուգընկեր): Գնահատումը տվյալ պարագայում ևս խիստ անհատական է 15% գնահատվում է թիմային աշխատանքը, 25% մասնակցությունը, կատարվում է մատյանի ամենօրյա լրացում զուգընկերոջ համար և ամենօրյա հետադարձ կապ մարզիկի և ընկերոջ միջև (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Զուգընկերոջ գնահատումը	Մարզիկների գնահատում
Թույլ, միջին, ուժեղ	Թույլ, միջին, ուժեղ
1. Բոլորին վերաբերվում է հարգանքով	1. Բոլորին վերաբերվում է հարգանքով
2. ընկերը ցուցաբերում է քաղաքավարություն և անձնական պատասխանատվություն	2. մարզիկը զարգացրել է իր հմտությունների ոլորտը
3. ընկերը դրևորում է համապատասխան հաղորդակցման հմտություններ տարբեր իրավիճակներում	3. մարզիկը մասնակցել է տարբեր միջոցառումների

4. Ընկերը օգնում էր հաղորդակցվել մյուս աշակերտների հետ	4. մարզիկը հաղորդակցվում էր ընկերոջ հետ ըստ իր հմտությունների մակարդակի
--	---

Միացյալ սպորտի ցուցաբերած արդյունքները կարելի է բաժանել երկու՝ առողջական օգուտների և սոցիալական օգուտների: Առաջինի մեջ հիմնականում տեղ են զբաղեցնում էներգիայի մակարդակի բարձրացումը, դիմացկունության, ուժի և ճկունության բարձրացումը, հիվանդությունների ռիսկի նվազեցումը, լարվածության և սթրեսի նվազեցումը: Սոցիալական օգուտներն ավելի շատ ընդգրկում են ինչպես սովորել թիմային աշխատանք, սովորել կանոններին հետևել, կարգապահություն և նվիրվածություն, սոցիալական շփում ընկերների և հասակակիցների հետ: Միացյալ սպորտն իր առջև խնդիր է դնում՝

- ինչպես սովորեցնել և առաջ տանել իմաստավորված ներգրավվածությունը ձեր թիմի անդամների համար
- ինչպես բացահայտել հաջողության չափանիշը
- ինչպես ընտրել համապատասխան սպորտաձևը
- ինչպես գնահատել և ընտրել մարզիկներին և ընկերներին
- ինչպես կազմել թիմերը
- ինչպես զարգացնել թիմը մարզումների և մրցումների միջոցով վերափոխել կյանքն ամեն օր:

Միացյալ սպորտում կարևոր է սպորտաձևի ճիշտ ընտրություն կատարել, որը կլինի անհատական մոտեցման սկզբունքի հիման վրա, կարևոր է գույրընկերների ճիշտ ընտրությունը: Ստորև ներկայացնում ենք այն երեք խմբերը, որտեղ տարբեր մարզաձևեր կարող են դասակարգվել և բնորոշվել.

Խումբ 1

ինքնուրույնության և անմիջական մրցակցության բարձր մակարդակ

- ուժ, մեծ չափեր և արագության պահանջներ
- մարզիկներն ու օգնականները պետք է լինեն նույն ունակություններով և տարիքի

- խաղացողի դոմինանտություն
- կարող են լինել անվտանգության բարձր ռիսկեր
- կանոնները հարմարեցված են ըստ սպորտաձևի

Խումբ 2

- ինքնուրույնության ցածր մակարդակ,
- մարզիկներն ու օգնականները պետք է լինեն նույն ունակություններով սակայն կարող են տարբերվել ըստ սպորտաձևի

- առողջական և անվտանգության ռիսկերը նվազեցված են մինիմումի քանի որ չկա անմիջական մրցակցություն

- Չկա խաղացողի դոմինանտություն

Խումբ 3

- մարզիկներն ու օգնականները բաժանված են տարբեր խմբերի՝ ըստ իրենց ունակությունների մակարդակների

- անհատական մրցումներով վաստակում են միավորներ իրենց թիմի համար:

Այն մարզիկների համար, որոնք պատրաստ չեն թիմային աշխատանքի, կան այլընտրանքային սպորտաձևեր:

- Միասնական սպորտի անհատական սպորտաձևեր՝ բոքս, բռուլինգ

- միասնական վերստեղծում
- ավանդական հատուկ օլիմպիադա
- մարզիկների լիդերության ծրագիր

Մարզիկի ունակություններն ու հմտությունները պետք է հիմք հանդիսանան օգնականի ընտրության հարցում

Փորձը ցույց է տալիս, որ «Յունիֆայդ սպորտը» փոխել է թե ինչպես են հաշմանդամությունը ուսանողները դիտարկում դպրոցում: Նրանց վերաբերվում են ավելի հարգանքով և դիտարկվում են որպես անհատների՝ հիասքանչ ինքնություն և տաղանդներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Health Leadership Award recipients from Around the World. Retrieved January 23, 2017, from <http://specialolympics.org>
2. Larson, S.A., Hallas-Muchow, L., Aiken, F., Hewitt, A., Pettingell, S., Anerson, L.L., Moseley, C., Sowers, M., Fay, M.L., Smith, D., Kardell 2014 In-Home and residential Long-Term Supports and Services for persons with Intellectual Disabilities: University of Minnesota, Research and Training Center on Community Living, Institute on Community Integration. P 41-75
3. Special Olympics International 2015. Reach Report Summary. Retrieved from: <http://www.specialolympics.org>
4. Special Olympics International. Unified sports Evaluation Report. Retrieved from: <http://media.specialolympics.org/research/unified-sports>.

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊՈՂ ԵՎ ՄՈՒԼՏՖԻԼՄԵՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Լ.

ԳՀՄ «ՌԻՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ամփոփագիր: Հոդվածում ներկայացված է մուլտֆիլմերի ներգործությունը երեխաների առողջ ապրելակերպի վրա:

Առանցքային բառեր: *առողջ ապրելակերպ, մուլտֆիլմ, նախադպրոցական, նույնականացում, սոցիալականացում, դիրքորոշում, սոցիալական մանրակերտ, վարքագիծ, գործունեություն, ագրեսիա:*

ЗДОРОВЫЙ ОБРАЗ ЖИЗНИ И МУЛЬТФИЛЬМЫ В ДОШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

ПЕТРОСЯН Р. Л.

УНИВЕРСИТЕТ “УРАРТУ”, ЕРЕВАН, АРМЕНИЯ

Аннотация. В статье представлены особенности влияния мультфильмов на здоровый образ жизни дошкольника.

Ключевые слова: *Здоровый образ жизни, мультфильм, дошкольник, идентификация, социализация, установка, социальная модель, поведение, деятельность, агрессия.*

HEALTHY LIFESTYLE AND CARTOON IN PRE-SCHOOL AGE PETROSYAN H. L.

“URARTU” UNIVERSITY, YEREVAN, ARMENIA

Abstract. The peculiarities of cartoon affects on a healthy lifestyle of pre-school children are presented in this article.

Keywords: *healthy lifestyle, cartoon, pre-school, identification, socialization, position, social model, behavior, activity, aggression.*

Հասարակությունում ընթացող սոցիալ-տնտեսական փոփոխությունները մեծապես անդրադառնալով երկրում սոցիալ-մշակութային մթնոլորտի վրա, իրենց ուղղակի և անուղղակի ազդեցությունն են գործում աճող սերնդի դաս-

տիարակության, հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Հետևաբար, հրատապ նշանակություն է ստանում նախադպրոցականի առողջ ապրելակերպի ապահովման գործընթացը: Առողջ ապրելակերպի հիմնական բաղադրիչներն են՝ առողջ սնունդը, թթվածնով հարուստ օդը, օրվա ռեժիմը, շարժողական ակտիվությունը, կոփումը, հիգիենան, հոգեկան և հուզական վիճակը: Ստորև կանդրադառնանք հոգեկան առողջության հիմնախնդրին, քանզի այն փոխադարձ կապի մեջ է մնացած բոլոր այն բաղադրիչների հետ, որոնք ապահովում են երեխայի առողջ ապրելակերպը:

Նախադպրոցական տարիքում ձևավորվում է համեմատաբար այն կայուն ներաշխարհը, որը հիմք է տալիս երեխային անվանել անձ, ով ի վիճակի է հետագա զարգացման և կատարելագործման: Շատ կարևոր է հատկապես այս տարիքում հետամուտ լինել երեխայի լիարժեք զարգացմանը՝ հետագայում առողջ սերունդ ունենալու ակնկալիքով:

Նախադպրոցականներին ներկայումս բնորոշ է համակարգչային և հեռուստատեսային անբարենպաստ կախվածությունը, հատկապես տարիքին բնորոշ հակվածությունը մուլտֆիլմերի նկատմամբ, ինչն ուղղակի և անուղղակի կերպով խոչընդոտում է առողջ ապրելակերպի կայացման գործընթացը:

Շրջապատող իրականության մասին պատկերացումները երեխան ստանում է նաև մուլտֆիլմերի միջոցով, ընտրություն է կատարում կերպարների միջև, գնահատում, սովորում նրանցից: Այս իմաստով մուլտֆիլմերի բոլոր անձնավորված կերպարները նախադպրոցականի համար վարքի պատրաստի մոդելներ են դառնում, որոնք նրան սեփական ինքնության հնարավոր տարբերակներ են առաջարկում: Ժամանակի հետ զուգընթաց փոխվում է մուլտֆիլմերի որակը և փոփոխություններն ունենում են իրենց դրական, առավելա-

պես բացասական հետևանքները: Նախկին տարիների խրատական, դաստիարակչական մուլտֆիլմերին փոխարինելու են եկել ժամանակակից տեխնոլոգիաներով ստեղծվածները, որոնք ի հակադրություն նախորդների, երեխաներին առավել գայթակղիչ են թվում: Ներկայիս սերնդին «ձանձրացուցիչ, անհետաքրքիր» թվացող իրական բովանդակությամբ մուլտֆիլմերը այլևս չեն գայթակղում, փոխարենը նրանք կախվածության աստիճանի հրապուրված են գունային և տեխնիկական հագեցվածությամբ գերժամանակակից մուլտֆիլմերով [3]: Ցավոք վերջիններս ուսուցողական չեն և մեղմ ասած անբարենպաստ ազդեցություն են գործում երեխայի ներաշխարհի վրա, քանի որ ստեղծողների նպատակը գերշահութաբերությունը և ոչ թե դրանց ուսուցողականությունն է:

Նախադպրոցական տարիքին բնորոշ նույնացման գործընթացը ենթադրում է ձգտում վերցնել այն նորմերն ու սոցիալական դիրքորոշումները, որոնք ուղղակիորեն չեն ուսուցանում, այլ կրկնօրինակում են որոշակի օբյեկտի դերն ու վարքը: Նույնացումն ընկած է երեխայի սոցիալականացման հիմքում, սակայն այն կարող է նաև վնասակար դեր ունենալ այն դեպքում, երբ նույնականացման օբյեկտն ապասոցիալական վարքի տեր է և ունի վնասակար սոցիալական դիրքորոշումներ: [2]

Ահա թե ինչու սոցիալական մանրակերտների ընտրության հարցը պետք է ուշադրության գլխավոր թեման դարձնել:

Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել մուլտֆիլմերի ընտրության հարցին: Արդի ժամանակակից մուլտֆիլմերում հերոսները հիմնականում անհասկանալի պահվածք ունեն. աղջիկները կարող են ունենալ տղամարդկային վարքագիծ և լինել ավելի ուժեղ, քան տղաները, և հակառակը: [4] Հաճախ նաև հերոսների բացա-

ասկան վարքագիծը չի պատժվում, հետևանքում՝ երեխաների մոտ առաջանում է ամենաթողություն զգացողություն և անհետանում են վարքագծի դրական չափանիշները: Էկրանից այն կողմ հերոսները կատարում են կյանքի համար վտանգավոր արարքներ, ինչը խեղաթյուրում է երեխայի ինքնապահպանման բնագոր: Որոշ տեսարաններում ցուցադրվում է անհարգալից վերաբերմունք մարդկանց, բնության և կենդանիների նկատմամբ, սրան միանում են նաև ժառգնային բառերը: [1]

Որպես առողջ ապրելակերպ ապահովող գործունեության ձև մուլտֆիլմերի դիտումն իհարկե նախընտրելի չէ, սակայն վերջին շրջանում ստեղծվել են այնպիսի հայկական մուլտֆիլմեր, որոնք գունային և երաժշտական լուծումներով չզիջելով արտասահմանյան մուլտարտադրությանը և գայթակղելով նախադպրոցականներին, կարող են այլընտրանք հանդիսանալ և նպաստավոր լինել դաստիարակության գործընթացում: Մասնավորապես «Անահիտ» մուլտֆիլմը ներառելով ուսուցողական տարրեր, կարող է նպաստել նախադպրոցականների առողջ հոգեկան զարգացմանը: Ընկերասիրությունը և հարազատին օգնելու ձգտումն այստեղ հետաքրքիր ձևով է ցուցադրված: Կենդանիները հանդիսանում են հերոսի բարեկամներն ու պաշտպանները. գործում է «կենդանիները մեր բարեկամներն են» սկզբունքը, որը կարող է փոխել երեխայի վերաբերմունքը կենդանիների նկատմամբ: Մուլտֆիլմում դրական և բացասական հերոսները տարանջատված են: Երեխան դիտելով մուլտֆիլմը՝ իր համար հստակ կարող է ընտրել այն կերպարը, ում ցանկանում է նմանվել: Քանի որ բացասական հերոսները ֆիլմի վերջում պատժվում են, հետևաբար երեխան կձգտի նմանվել դրական կերպարներին: Առկա են նաև հումորային դրվագներ, որոնք հասանելի են նախադպրոցականների համար: Օրինակ երբ

Զանգին ինտերնետային կայքի միջոցով փորձում է կին գտնել Վաչագան արքայազնի համար, սակայն չի ստացվում: Վիրտուալ շփման հերքումը կարող է դրական ազդել երեխայի՝ շրջապատի հետ սոցիալական հարաբերություններ հաստատելու գործում: Հարկ է նշել, որ հայկական ֆիլմերում կին և տղամարդ կերպարները հստակ տարանջատված են և ներկայացվում են իրենց բնորոշ առանձնահատկություններով:

Ընդհանրացնելով, կարելի է առանձնացնել հիմնական թերությունները, որոնք առկա են մուլտֆիլմերում՝ երեխային դրանցից հնարավորինս ապահովագրելու նպատակով.

- 1) ագրեսիայի և բռնության ցուցադրում,
- 2) անպատժելիություն,
- 3) բարու և չարի չսահմանազատում,
- 4) տղամարդու և կնոջ կերպարների ոչ լիարժեք մատուցում,
- 5) ինքնապահպանման բնագրի ոչ լիարժեք մատուցում:

Այսպիսով, մուլտֆիլմերի դիտման ժամանակային, ինչպես նաև դրանց ոչ բարենպաստ բովանդակային չարաշահումը կարող են ուղղակիորեն բացասական անդրադարձ ունենալ նախադպրոցականի առողջ ապրելակերպի, հատկապես հոգեկան և հուզական ներդաշնակ զարգացման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Միրաքյան «Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները», Երևան, «Միտք», 2012թ., 92 էջ
2. Ս. Սեդրակյան «Ընտանիքի հոգեբանություն», Երևան, «Ուրարտու», 2010թ., 456 էջ
3. Асенин С. “Мир мультфильма”, М., “Искусство”, 1986г., 287 с.
4. Мухина В. С. “Возрастная психология”, М., “Академия”, 2001 г., 624 с.

**ՎԼԱՍՍԿԱՐ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
 ԵՎ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
 ՀԵՍՈՂԻՒԱԼԻԶՄԱՅԻՆ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ՄՈՏ
 ՍԵՂՐԱԿՅԱՆ Ս.Ա., ԲԱՐՍԵՂՅԱՆ Վ.Ո.**

**«ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
 «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՄՊԸ «ԱՍՏՂԻԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ,
 ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Ամփոփագիր: Հետազոտության մեջ ներառված են հեմո-
 դիալիզային 93 հիվանդ, որոնց մոտ բացահայտվել է են այն
 տհաճ սովորությունները, որոնք ներգործում են ռեակտիվ և
 անձնային տագնապայնության, դեպրեսիայի և կյանքի որա-
 կի վրա: Կյանքի որակի նկատմամբ որոշ չափորոշիչներ
 ցածր էին. ալկոհոլ օգտագործող հիվանդների մոտ (RE, MH,
 MC), իսկ որոշ այլ չափորոշիչներ բարձր էին ծխողների մոտ
 (աշխատանքային ստատուս, սոց փոխներգործությունների
 որակ): Ամբողջությամբ տհաճ սովորությունների տարածվա-
 ծությունը դիալիզային հիվանդների բավական բարձր է, պայ-
 քարը նրանց հետ անբավարար:

***Առանցքային բառեր.** ծխախոտամոլություն, ալկոհոլամո-
 լություն, հեմոդիալիզ, վնասակար սովորույթներ, դեպրեսիա,
 տագնապ, կյանքի որակ:*

**РАСПРОСТРАНЕННОСТЬ И НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ
 ВРЕДНЫХ ПРИВЫЧЕК У ГЕМОДИАЛИЗНЫХ БОЛЬНЫХ
 СЕДРАКЯН С.А., БАРСЕГЯН В.Р.
 УНВЕРСИТЕТ УРАРТУ, ЕРЕВАН, АРМЕНИЯ
 ООО НАТАЛИ ФАРМ, МЦ АСТГИК, ЕРЕВАН, АРМЕНИЯ**

Аннотация. В исследование включены 93 пациента на гемодиали-
 зе, на выявление распространенности вредных привычек и их влияний
 на реактивную и личную тревогу, депрессию и качество жизни. Неко-
 торые параметры качества жизни были ниже у пациентов, упот-

ребляющих алкоголь (RE, MH, MC), а другие параметры были выше у курящих (рабочий статус, качество социальных взаимодействий). В целом, распространенность вредных привычек среди диализных пациентов очень высокая, а борьба с ними недостаточная.

Ключевые слова: курение, алкоголизм, гемодиализ, вредные привычки, депрессия, тревога, качество жизни.

THE PREVALENCE AND SOME PECULARITIES OF HARMFUL HABITS AMONG HEMODIALYSIS PATIENTS.

SEDRAKYAN S. A.,

URARTU UNIVERSITY, YEREVAN, ARMENIA

BARSEGHYAN V. R.

NATALY PHARM LLC, ASTGHIK MC, YEREVAN, ARMENIA

Abstract. 93 hemodialysis patients were observed on the presence of harmful habits, their prevalence and impact on the reactive and personal anxiety, depression and quality of life. Some quality of life parameters (RE, MH, MC) are lower among alcohol abuse patients, and other parameters are higher among tobacco users (work status, quality of social interaction) in comparison with non users. Generally, the prevalence of harmful habits are very high among hemodialysis patients, and the fight against them is insufficient.

Keywords: smoking, alcoholism, hemodialysis, harmful habits, depression, anxiety, quality of life.

Արդիականություն: Վնասակար սովորույթների, մասնավորապես՝ ծխախոտամոլության և ալկոհոլամոլության ազդեցությունը մարդու առողջության վրա գիտագործնական բժշկության հիմնախնդիրներից է, որը բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Մակայն քիչ ազդեցիկ չեն նաև այս խնդիրների հոգեբանական, սոցիալական բարդադրիչները: Վնասակար սովորույթների թե՛ բժշկական, թե՛ սոցիալ-հոգեբանական ասպեկտները բավականին ուսումնասիրված են, սակայն որոշակի խմբերում հետազոտությունները խիստ աղքատիկ են: Մասնավորապես, այդպիսի

խումբ է երիկամների քրոնիկ հիվանդությամբ տառապող և հեմոդիալիզային բուժում ստացող հիվանդների խումբը:

Հետազոտության նպատակը: Հետազոտել ՀՀ-ում հեմոդիալիզային թերապիա ստացող հիվանդների շրջանում ծխախոտամոլության և ալկոհոլամոլության տարածվածությունը, դրանց առանձնահատկությունները:


Մեթոդները: Հետազոտությունն իրականացվել է Աստղիկ բժշկական կենտրոնի հեմոդիալիզի բաժանմունքում, 2015-2016 թթ. ընթացքում: Հետազոտության մեջ ընդգրկվել են երիկամների քրոնիկ հիվանդության վերջնական փուլում գտնվող 26-ից 70 տարեկան (միջին տարիքը՝ 52.42 ± 10.95 տարի; $M \pm SD$) 93 հիվանդ, որոնցից՝ 59 տղամարդ (63.4%) և 34 կին (36.6%): Վնասակար սովորությունների առկայությունը և դրսևորումները հայտնաբերելու նպատակով կիրառվել են Առողջության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) կողմից առաջարկված CINDI հարցաշարի համապատասխան գլուխները [9]: Հիվանդների կյանքի որակի ցուցանիշները ստացվել են երիկամային հիվանդների կյանքի որակը (ԿՈ) գնահատող KDQOL-SF հարցաշարի կիրառմամբ [5, 6]: Հիվանդների մոտ ռեակտիվ և անձնային տագնապները հետազոտվել են Սպիլբերգերի թեստի միջոցով [7], իսկ դեպրեսիան՝ Բեքի սանդղակով [3, 4]:

Ստացված տվյալները:


Ծխախոտամոլությունը: Հետազոտմանը մասնակցած հիվանդների 60.3% նշում է, որ տանը ծխում են, կամ իրենց ընտանիքում առկա են ծխողներ: Հիվանդների 5.8% անցկացնում է աշխատանքի վայրում 5 ժամից ավել ծխողների միջավայրում, իսկ 4.35% անցկացնում է 1-5 ժամ: Հիվանդների 50.7% երբևիցե կյանքի ընթացքում չի ծխել: 43.8% կյանքի ընթացքում ծխել է 100 և ավել գլանակ, ընդ որում նրանց 93.75% դարձել են կանոնավոր ծխողներ՝ նվազագույնը 1 տարի ամեն

օր կիրառել են ծխախոտ: Կանոնավոր ծխողների՝ ստաժը՝ եղել է 3-60 տարի, միջինում 28.13 ± 14.63 տարի: Կանոնավոր ծխողների օրեկան օգտագործած զլանակների քանակը տատանվում է 1-50 զլանակ/օրեկան սահմաններում, միջինում՝ 17.5 ± 12.2 : Կանոնավոր ծխողներից 50% դադարեցրել է ծխելը՝ հիվանդության հետ կապված, իսկ 34.4% հստակ ցանկություն ունի այն դադարեցնել: Մակայն հիվանդների 12.5% (կամ ծխելը դադարեցնելու ցանկություն ունեցողների 36.4%) երբեք չի փորձել դադարեցնել ծխելը: Կանոնավոր ծխողների 22.25%-ին ծխելու հնարավոր բացասական հետևանքները ընդհանրապես չեն անհանգստացնում: 81% դեպքերում՝ բժիշկը, 0% դեպքերում՝ ատամնաբույժը, 23.8% դեպքերում՝ այլ բուժաշխատողներ, 95.2% դեպքերում՝ ընտանիքի անդամները, և 42.9% դեպքերում՝ այլ անձինք խորհուրդ են տվել դադարեցնել ծխելը: Կանոնավոր ծխող հեմոդիալիզի հիվանդները օգտագործում են միջինում 0.26 ± 0.17 նիկոտինի պարունակությամբ և 2.64 ± 1.57 խեժի պարունակությամբ զլանակներ: Տղամարդկանց մոտ կանոնավոր ծխողները կազմել են 66.7%, իսկ կանաց մոտ՝ 7.1%:

Օխողների և չծխողների խմբերում իրականացվել է ռեակտիվ տազնապի (ՌՏ), անձնային տազնապի (ԱՏ) և դեպրեսիայի մակարդակի համեմատական վերլուծություն: Պարզվել է, որ խմբերի միջև վերոհիշյալ ցուցանիշների վիճակագրական նշանակալից տարբերություն չկա: Կյանքի որակի (ԿՈ) ցուցանիշների համեմատական վերլուծության տվյալները ցույց տվեցին, որ ծխողների խմբում աշխատանքային կարգավիճակը և սոցիալական փոխազդեցության որակը վիճակագրորեն հավաստի բարձր են (Գծապատկեր 1,2):



Գծապատկեր 1. ԿՈ Աշխատանքային կարգավիճակը ցուցանիշը՝ չծխող և ծխող հիվանդների մոտ




Գծապատկեր 2. ԿՈ Սոցիալական փոխազդեցության որակի ցուցանիշը՝ չծխող և ծխող հիվանդների մոտ


Ակնոհուլամուտությունը: Վերջին 12 ամսվա ընթացքում ալկոհոլ օգտագործած հիվանդների քանակությունը կազմել է հարցմանը մասնակցածների 58.6%-ը: Վերջին 7 օրում գարեջուր օգտագործել է հիվանդների 8.7%-ը, գինի՝ 8.8%-ը իսկ թունդ ալկոհոլային խմիչքներ՝ օղի, կոնյակ՝ 30.4%-ը, ընդ որում կիրառած խմիչքի միջին քանակությունը կազմել է 126.2±78.1 մլ: Թունդ ալկոհոլային խմիչքների կիրառման հաճախականությունը հետևյալն է՝ հիվանդների 38%-ը կիրա-

